ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՁԳԱՅՆՈՒԹՅՈՒՆ

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Երևան, 2024

Հետազոտության հեղինակ՝

Խանում Գևորգյան

Հետազոտությունը պատրաստվել է «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագրի» շրջանակում:
«Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի համապարփակ քաղաքականությանն ուղղված ենթադրամաշնորհային ծրագիրն» իրականացվում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակում:

Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Ծվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ուսումնասիրությունից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

Բովանդակություն

Նախաբան 4

Մեթոդաբանական հիմունքներ 9

Թեմատիկ և բովանդակային հետազոտության մեթոդ 9

Ուսումնասիրության արդյունքներ և վերլուծություն 15

Ենթաթեմա 1. Հայաստանի տարրական և միջին դպրոցներում ոչ խտրական բովանդակության և դասավանդման պրակտիկայի կանոնակարգման պահանջները 15

Գենդերային չեզոք իրավական բառամթերք 17

Համամարդկային արժեքներ 18

Ներառականություն և անհատականություն 19

Վարք և վարվելակերպ 21

Իրավահավասարություն 22

Դասագրքեր. օրենքներ թղթի՞ վրա 25

Ենթաթեմա 2. Գենդերային զգայունության արտացոլումը հայաստանյան բուհերում՝ մանկավարժի մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում: 29

Իրավահավասարություն 30

Բարեվարքություն 32

Համամարդկային արժեքներ 33

Ենթաթեմա 3. Կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ գործընթացում առնչվող մասնագետների աշխատանքային վերապատրաստման նյութերը և դրանց հիմքում ընկած նորմատիվ իրավական կարգավորումները 36

Բռնության կանխարգելում 38

Իրավահավասարություն 41

Բարեվարքություն և բարոյականություն 43

Շարունակական կրթություն 45

Եզրակացություն 47

Սահմանափակումներ 53

Վերջաբան 55

Առաջարկություններ 56

Գրականության ցանկ 61

Հավելվածներ 0

Հավելված 1. Ուսումնասիրված օրենքներն՝ ըստ ենթաթեմաների 0

Հավելված 2. Ուսումնասիրության կոդերն ու թեմաները 5

Հավելված 3. ՀՊՄՀ-ի կրթական ծրագրի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական բաժնում գենդերազգայնության ձգտող կետեր 0

Հավելված 4. Ոստիկանության և առողջապահական համակարգի թեմատիկ վերապատրաստումներ 2023-2024 7

Հավելված 5. ՀՀ ԿԳՄՄՆ պատասխան-հրամանն ուղղված *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին 9

Հավելված 6՝ ՀՀ ՆԳՆ պատասխան-հրամանն ուղղված *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին 10

Հավելված 7՝ ՀՀ ՀՊՄՀ-ի պատասխան-հրամանն ուղղված *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին 11

Հավելված 8՝ ՀՀ ԱՆ պատասխան-հրամանն ուղղված «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ նախագահին 12

Նախաբան

Գենդերազգայունության ապահովումը կրթական համակարգում ենթադրում է գենդերազգայուն քաղաքականությունների ներդրում կրթական բոլոր մակարդակներում՝ տարեկան պլանների, դասապլանների, դասագրքերի, վերապատրաստման ռեսուրսների և ընդհանուր դպրոցական մշակույթի փոփոխություն՝ նպատակ ունենալով փոխել արժեքներն ու սոցիալական նորմերը, որոնք փոխանցվում են կրթական համակարգի միջոցով[1]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրենքները և դրանցում ներառված հավասարության սկզբունքները հաճախ մնում են «թղթի վրա» և չեն ներառվում կրթության չափորոշիչների, դասապլանների և դասագրքերի բովանդակության մեջ: Օրինակ, կանանց կարծրատիպային ներկայացվածությունը դասագրքերում՝ չնայած օրենքի հավասարության պահանջին: 2013 թվականին իրականացված հետազոտության համաձայն, «խտրականության տեսանկյունից հայաստանյան դպրոցներում առավել խոցելի են աղջիկները», քանի որ ծնողավարությունը, աշակերտների դաստիարակությունը, ինչպես նաև հասարակական նորմերը արտացոլում են բազմաթիվ կարծրատիպեր, որոնք ազդում են ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների և վերաբերմունքի վրա[2]:

Չնայած գենդերային հավասարությունը հիմնականում ներկայացվում է որպես սոցիալական արդարության խնդիր, այն նաև հիմնային ազդեցություն կարող է ունենալ երկրի տնտեսական զարգացման վրա[3]: Կանանց ներգրավվածությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքում օգնում է երկրի տնտեսության զարգացմանը[4]: Ժողովրդավարության բարձր ինդեքս ունեցող երկրներում, ինչպիսիք են Նորվեգիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Կանադան, և

---

[1] Silova, I. (2016). Gender analysis of Armenian school curriculum and textbooks. The World Bank.
[2] Ծատուրյան, Ռ. (2013). *Գենդերային խնդիրները մանկավարժական (դասախոսների, ուսուցիչների և ապագա մանկավարժ ուսանողների) միջավայրում:* Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան:
[3] Pervaiz, Z., Akram, S., Ahmad Jan, S., & Chaudhary, A. R. (2023). Is gender equality conducive to economic growth of developing countries? *Cogent Social Sciences*, 9(2). https://doi.org/10.1080/23311886.2023.2243713
[4] Ibid.

այլն[5], գոյություն ունեն մի շարք կայուն և բարդ գնահատման մեթոդներ և համակարգեր, որոնք թույլ են տալիս հետևել կրթական համակարգում գենդերային անհավասարության դեպքերին: Շատ հասարակություններ արդեն մշակել են քաղաքականություններ, որոնք նպատակ ունեն կրթությունը դարձնել ավելի գենդերարձագանքող՝ հատուկ ուշադրություն դարձնելով աղջիկների կամ տղաների առանձնահատուկ կարիքներին: ԵՄ անդամ պետություններից միայն Շվեդիան և Լատվիան են հասել որոշակի հաջողությունների գենդերային քաղաքականությունների ներդրման հարցում, ինչը պահանջել է երկար, թանկ և բարդ աշխատանք[6]: Մալթայի, Ավստրիայի, Շվեդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի կրթական համակարգերում գենդերային հավասարության մոտեցումը և իրականացման մեթոդները գրեթե համընկնում են[7]: Այս երկրներում գենդերային հավասարությունը չի դիտարկվում որպես առանձին առարկա կամ դասաժամ, այլ կիրառվում է «հորիզոնական և ուղղահայաց համարկման (integration) մոտեցումը»՝ ինչը հանգեցնում է առարկայական ծրագրերի, բովանդակության, մեթոնդերի գենդերազգայնությանը: Իհարկե տնտեսական աճն ու բարձր զարգացվածությունը հնարավոր չէ բացատրել բացառապես գենդերազգայնությամբ, սակայն, գենդերային հարաբերությունները կարևոր ազդակ են զարգացող երկրներում մարդկային կապիտալի, տնտեսության արտադրողականության, տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ զարգացումները բացատրելու համար[8]:

Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարությունը և խտրականության բացառումը կրթության ոլորտում համակարգվում են մի շարք միջազգային և տեղական իրավական կարգավորումներով, ինչպիսիք են՝

---

[5] Economist Intelligence Unit (EIU). (2023). *Democracy Index 2023: Age of conflict.* Retrieved from https://pages.eiu.com/rs/753-RIQ-438/images/Democracy-Index-2023-Final-report.pdf?version=0&mkt_tok=NzUzLVJJUS00MzgAAAGVcBs16jJlK3xXKDNyECz60d4tiNqNgZGgmysK_JrarIse2EnxtYg7OxYymLplSu93EakB_h_OwpJ1L5FYvVYJ9nve-CCHiP9UmZs6fOM-Mo-N1g

[6] Silova, I. (2016). *Gender analysis of Armenian school curriculum and textbooks.* The World Bank. p. 15

[7] Eurydice (2010), cited in Silova, I. (2016). *Gender analysis of Armenian school curriculum and textbooks.* The World Bank

[8] Pervaiz, Z., Akram, S., Ahmad Jan, S., & Chaudhary, A. R. (2023). Is gender equality conducive to economic growth of developing countries? *Cogent Social Sciences,* 9(2). https://doi.org/10.1080/23311886.2023.2243713

- 1993 թվականի ***«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման»*** (CEDAW) կոնվենցիայի ստորագրումը, որը պարտավորեցնում է մասնակից պետություններին ձեռնարկել քաղաքական և սոցիալական տարբեր քայլեր՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը և վերացնելով կանանց նկատմամբ խտրականությունը[9]:
- 1995 թվականի ***Պեկինի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը***, որը մասնակից պետություններին պարտավորեցնում է մշակել գենդերային հավասարությանն ուղղված ռազմավարություններ և քաղաքականություններ[10]:
- 2010 թվականի ***Գենդերային քաղաքականության հայեցակարգի*** ընդունումը[11]:
- 2013 թվականի ***«Կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»*** ՀՀ օրենքի ընդունումը[12]:
- 2015 թվականին ընդունված ***ՄԱԿ-ի 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգը***, որը բաղկացած է 17 Կայուն զարգացման նպատակներից (ԿԶՆ), որոնց նպատակը մարդկանց և երկրագնդի բարեկեցությունն ու խաղաղությունն են: ԿԶՆ 5-ը վերաբերում է անդամ երկրներում գենդերային հավասարությանը[13]:

---

[9] Committee on the Elimination of Discrimination Against Women. (1993). *General recommendation No. 19: Violence against women*. United Nations. Retrieved from https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=3&DocTypeID=11

[10] United Nations. (1995). *Beijing Declaration and Platform for Action: Fourth World Conference on Women*. United Nations. Retrieved from https://www.un.org/en/events/pastevents/pdfs/Beijing_Declaration_and_Platform_for_Action.pdf

[11] Government of the Republic of Armenia. (2011). *Gender policy concept paper of the Republic of Armenia*. Retrieved from https://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf

[12] ՀՀ Ազգային Ժողով. (2013). *«Կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»* օրենք. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=83841

[13] UN General Assembly. (2015*). The 2030 Agenda for Sustainable Development.* United Nations. https://sdgs.un.org/goals#history

- 2017 թվականի ԵՄ-Հայաստան ***«Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի»*** (CEPA) ստորագրումը, համաձայն որի Հայաստանը պարտավորվում է ստեղծել հավասար հնարավորություններ և խուսափել խտրական վերաբերմունքից, ինչպես նաև բարձրացնել գենդերային հավասարությունը կանանց և տղամարդկանց միջև՝ բացառելով խտրական վերաբերմունքը սեռի, ռասայի, էթնիկ պատկանելության, կրոնի կամ հավատքի,
- հաշմանդամության, տարիքի կամ գենդերային կողմնորոշման հիմքով[14]:
- 2018 թվականի Եվրոպայի խորհրդի ***«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան»*** (Ստամբուլյան կոնվենցիա), որը պարտավորեցնում է մշակել պատշաճ գործողություններ գենդերային բռնության դեմ: *Չնայած այն ստորագրվել է, սակայն դեռևս չի վավերացվել*[15]:

Անկախ միջազգային համաձայնագրերի ստորագրումից կամ վավերացումից, միայն պետության համապարփակ և հետևողական գործելակերպի շնորհիվ է հնարավոր ապահովել գենդերային հավասարություն[16]: Ցանկացած երկրում գենդերային հավասարության պահպանումն ու կայունությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է թիրախավորել կրթական համակարգից սկսած, քանի որ այստեղ են հարաբերվում հասարակության ամենաերիտասարդ անդամները: Չնայած քաղաքականության տեսանկյունից Հայաստանի գենդերային հավասարությունը կրթական համակարգի բոլոր ուղղություններում արտացոլելու ջանքերը բավականին մեծ են, կրթական համակարգի ստորին օղակներում դրական փոփոխությունը դեռևս շատ աննշան է[17]:

Այս զեկույցի գլխավոր նպատակը կրթական համակարգի

---

[14] European Union, & Republic of Armenia. (2017). *Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the Republic of Armenia*. Retrieved from https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A22018A0126%2801%29

[15] Council of Europe. (2018). *Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence* (CETS No. 210). Retrieved from https://rm.coe.int/168008482e

[16] Silova, I. (2016). *Gender analysis of Armenian school curriculum and textbooks.* The World Bank.

[17] Ibid.

գենդերազգայունության մակարդակի և խտրականության հավանական դրսևորումների ուսումնասիրությունն է կրթության բոլոր աստիճաններում: Ուսումնասիրության համար առանձահատուկ նշանակություն ունեն բոլոր մանկավարժների, բժշկական ոլորտի մասնագետների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, իրավապահ համակարգի աշխատողների մասնագիտական որակավորմանը միտված կրթական և վերապատրաստման ծրագրերի գենդերազգայունության գնահատումը, քանի որ այս ոլորտի մասնագետները անմիջական ազդեցություն ունեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ ընթացքում:

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են ուսումնառության հետևյալ երեք աստիճանները՝

- Տարրական և միջին դպրոցը,
- ԲՈՒՀ-երը, հատկապես մանկավարժների, ոստիկանի, քննիչի և բուժաշխատողի որակավորում տրամադրող հաստատությունները,
- Շարունակական կրթությունը, մասնավորապես մասնագիտական վերապատրաստումները, որոնց վերահսկողությունը վերապահված է վերոնշյալ մասնագետների գործունեությունը համակարգող լիազորված մարմնին:

Ուսումնասիրության շրջանակում փորձ է կատարվել պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Հայաստանի դպրոցներում ոչ խտրական բովանդակության և դասավանդման պրակտիկայի կանոնակարգման պահանջները

Հարց 1.1՝ Որո՞նք են ՀՀ հանրակրթական համակարգում խտրականության բացառման և գենդերազգայունության կանոնակարգման պահանջներն իրավական ակտերում և օրենքներում:

Հարց 1.2՝ Որո՞նք են ՀՀ կրթական համակարգում խտրականության բացառման և գենդերազգայունության կանոնակարգման պահանջները դպրոցական չափելի բովանդակության մեջ:

2. Գենդերային զգայունության արտացոլումը հայաստանյան ԲՈՒՀ-

երում՝ մանկավարժի մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում

Հարց 2.1՝ Ինչպե՞ս է գենդերազգայունությունը արտացոլվում ՀՀ ԲՈՒՀ-երում՝ ըստ համալսարանական կանոնադրությունների:

Հարց 2.2՝ Ինչպե՞ս է գենդերազգայունությունը արտացոլվում ՀՊՄՀ-ի մանկավարժի մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում՝ ըստ առարկայական ծրագրերի:

3. **Կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ գործընթացում առնչվող մասնագետների աշխատանքային վերապատրաստման նյութերը և դրանց հիմքում ընկած նորմատիվ իրավական կարգավորումները**

Հարց 3.1՝ Որքանո՞վ են ՀՀ ՆԳՆ ակադեմիայի կրթական առարկայական ծրագրերը գենդերազգայուն:

Հարց 3.2՝ Ինչպե՞ս են կանոնակարգվում ոստիկանների, իրավապահ համակարգի աշխատողների և բժիշկների վերապատրաստումները:

Այս համապարփակ մոտեցումը հնարավորություն կտա խորապես հասկանալու, թե որոնք են օրենսդրական և չափելի բովանդակության՝ գրքեր, վերապատրաստումներ, և այլն բացերը:

Այս բացերը վերլուծելն անհրաժեշտ պայման է, բայց բավարար չէ, քանի որ գենդերային հավասարությունը միանգամյա քաղաքականությունների և համակարգերի ներդրում չէ միայն[18], այլ ամենօրյա ջանքերի և շահագրգիռ բոլոր կողմերի շարունակական աշխատանք: Ուստի, պետք է կարևորվի այս հետազոտության հիման վրա հետագա աշխատանքների կազմակերպումը:

Մեթոդաբանական հիմունքներ

Թեմատիկ և բովանդակային հետազոտության մեթոդ

[18] Silova, I. (2016). *Gender analysis of Armenian school curriculum and textbooks.* The World Bank.

Ուսումնասիրության համար ընտրվել է ***թեմատիկ և բովանդակային վերլուծությունը*** (հիբրիդ վերլուծություն)՝ որպես հետազոտության գլխավոր մեթոդ: Այս երկու մեթոդների միաձուլումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու տվյալները և՛ որակական, և՛ քանակական տեսանկյունից[19]: ***Բովանդակային վերլուծությունը*** քանակական հետազոտության մեթոդ է, որը նախատեսված է տեքստերից և այլ իմաստային միավորներից կրկնվող և վավերական եզրակացություններ անել և հասկանալ դրանց օգտագործման համատեքստերը[20]: Բովանդակային հետազոտությունն էմպիրիկ մեթոդ է, որը թույլ է տալիս հասկանալ մի շարք գործոնների ուղղակի և անուղղակի ազդեցությունները՝ ներառյալ թաքնված, տողատակային ազդակները, որոնք կարող են ազդել ընթերցողի վրա: Բովանդակային վերլուծությունը ուսումնասիրում է տվյալներ, տեքստեր (տպագիր և ոչ տպագիր), պատկերներ կամ ձայնագրություններ՝ փորձելով հասկանալ դրանց ներգործությունն իրար վրա և փոխանցվող ուղղակի կամ անուղղակի տեղեկությունները՝ հիմնվելով որակական ուսումնասիրության վրա: Բովանդակային հետազոտության դեպքում հետազոտողն ուսումնասիրում է «լեզվականորեն կառուցված սոցիալական իրականությունը», որն արտացոլված է ուսումնասիրվող տեքստերում[21]: Հիմնվելով այս մեթոդի վրա, այս հետազոտությունը հիմնականում դիտարկել է օրենքներում, իրավական ակտերում, կրթական ծրագրերում և դասագրքերում առկա և հաճախակի կրկնվող բառերը, որոնք հետագայում ոչ միայն ուսումնասիրվել են անկախ, այլ նաև դարձել են ***թեմատիկ վերլուծության*** հիմք:

Թեմատիկ վերլուծությունը որակական հետազոտության մեթոդ է, որն օգտագործվում է տեքստում առկա իմաստային օրինաչափությունները և կրկնությունները հայտնաբերելու և մեկնաբանելու համար: Այս մեթոդի կիրառման արդյունքում տեքստի հիման վրա ձևավորվում են հիմնական

---

[19] Neuendorf, K. A. (2019). *Content analysis and thematic analysis*. In P. Brough (Ed.), *Advanced research methods for applied psychology* (pp. 211–223). Routledge.
[20] Krippendorff, K. (2004). *Content analysis: An introduction to its methodology* (2nd ed.). Sage Publications.
[21] Ibid.

թեմաները, որոնք հնարավորություն են տալիս առավել խորությամբ հասկանալ տվյալները: Թեմատիկ վերլուծության ընթացքում թեմաները կառուցվում և ներկայացվում են բանալի բառերի, կոդերի և թեմատիկ կառուցվածքների միջոցով: **Բանալի բառերը** այն բառերն են, որոնք հաճախ կրկնվում են տեքստում և տվյալներում և կարող են ունենալ կարևոր նշանակություն տվյալ համատեքստում[22]: Բանալի բառերի կրկնության հաշվարկումը նաև պայմանավորված է այս հետազոտության նաև բովանդակային վերլուծություն լինելով: Բանալի բառերի կրկնության հաշվարկը պայմանավորված է նաև այս հետազոտության բովանդակային վերլուծության բնույթով: **Կոդերը** այն բառերն ու արտահայտություններն են, որոնք կառուցվում են բանալի բառերի հիման վրա և ուղղակի կամ անուղղակի կերպով բնութագրում են ուսումնասիրվող երևույթը[23]: Իսկ արդեն վերլուծության **թեմաները** միանման իմաստ ներկայացնող կոդերի հիման վրա կառուցված գաղափարներն են, որոնք բացատրում, ապացուցում կամ հակազդում են վերլուծության գլխավոր հետազոտական հարցին կամ հարցերին[24]:

Թեմատիկ վերլուծության դեպքում գոյություն ունի հստակ ուսումնասիրության գործընթաց, որը հետևում է որոշակի քայլերի հերթականությանը: Այս վերլուծությունը նույնպես հետևել է այդ գործընթացին: Քայլերի հաջորդականությունը հետևյալն է[25]՝

1. Տեքստերի և տվյալների մանրակրկիտ ուսումնասիրություն, ***բանալի բառերի առանձնացում***;
2. ***Կոդերի ընտրություն***, որոնք կարևոր են հետազոտական հարցերին պատասխանելու համար;
3. Կոդերի և կոդախմբերի հիման վրա ***թեմաների ձևավորում*** և օրինաչափությունների առանձնացում;

---

[22] Naeem, M., Ozuem, W., Howell, K., & Ranfagni, S. (2023). A step-by-step process of thematic analysis to develop a conceptual model in qualitative research. International Journal of Qualitative Methods, 22. https://doi.org/10.1177/16094069231205789

[23] Jnanathapaswi, S. G. (2020). *Learning for pacifism: An anthology of the why, what & how of peace education*. *International Journal of Exclusive Global Research*, 5(3).

[24] Ibid.

[25] Guest, G., MacQueen, K. M., & Namey, E. E. (2012). *Applied thematic analysis*. SAGE Publications.

4. ***Թեմաների ստուգում***՝ արդյո՞ք դրանք համապատասխանում են ընդհանուր համատեքստին և կարող են օգնել պատասխանել հետազոտական հարցերին;
5. ***Թեմաների հստակեցում***՝ յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման սխեմայի կառուցում;
6. Ընդհանուր ***ուսումնասիրություն*** և ***թեմատիկ վերլուծություն***:

Այս գործընթացը սխեմատիկ ներկայացված է **Պատկեր 1**-ում: Այս ուսումնասիրության կազմում ընդգրկված բոլոր երեք հետազոտությունները կատարվել են թեմատիկ վերլուծության վեցքայլանոց գործընթացի համաձայն, ինչպես նաև բովանդակային վերլուծության կոդերի հաճախականության հաշվառմամբ:



Պատկեր 1: Հետազոտության ընթացքը համաձայն մեթոդի կիրառման քայլերի հերթականության (մշակեց՝ Խ. Գևորգյան)

Հետազոտական նյութը, ներառյալ օրենքները, հրամանները և կրթական ռեսուրսները, ընտրվել են կրթական համակարգը կարգավորելու նրանց

առաջնային դերի հիման վրա՝ հասկանալու համար արդյոք դրանք հայելում են սոցիալական իրականության խտրականության դրսևորումները: Երկրորդ, հինգերորդ և յորթերորդ դասարանների դասապլանների և դասագրքերի[26] ընտրությունը պայմանավորված է դասագրքերի և առարկայական չափորոշիչների հաստատման հետ[27]: Հետազոտության մեջ այլ դասարանների և դասագրքերի ներառումը կխանգարեր հետագա արդիականությանը, քանի որ ներկայումս Տավուշի մարզում փորձարկվող դասագրքերի հիման վրա մի շարք դասագրքեր կարող են փոփոխությունների ենթարկվել: Կրթական ծրագրերի և անհատական առարկայական ծրագրերի ընտրությունն էլ պայմանավորված է կրթական հաստատություններում դրանց՝ որպես կրթության կարգավորիչ գործառույթի հետ: Այդպիսով, ուսումնասիրվել են ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) կրթահամալրի, ինչպես նաև Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (այուսհետ՝ ՀՊՄՀ) բոլոր կրթական ծրագրերի և անհատական առարկայական ծրագրերը:

Առաջին ենթաթեմայի՝ *«Հայաստանի դպրոցներում ոչ խտրական բովանդակության և դասավանդման պրակտիկայի կանոնակարգման պահանջները»* շրջանակում հետազոտության կիզակետում եղել են «Մայրենի լեզու», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաները՝ իրենց համապատասխան չափորոշիչներով, դասագրքերով և ուսումնական պլաններով:

Ըստ Հայաստանի պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ), տարրական և միջին դասարաններում, որտեղ աշակերտը տարեկան անցկացնում է ավելի քան 3590 ժամ (տարրական) և 5950 ժամ (միջին), ամենաբարձր տոկոսային հարաբերակցություն ունեցող առարկաներից են «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաները: Այս առարկաները կազմում են տարրական

---

[26] Դասագրքերի ուսումնասիրության մեջ նաև դիտարկվել է **նշանագիտությունը**, քանի որ ուսումնասիրության ենթակա էր ոչ միայն տեքստային կոդերը, օրինակ «կին» կամ «իրավահավասարություն» կոդերը, այլ նաև այլ վիզուալ նշանագրերը, որոնք կարող են խտրական միտում ունենալ: Այդպիսի օրինակներ կարող են լինել, օրինակ, տարբեր գենդերների ներկայացուցիչների պատկերների առկայությունը կամ չառկայությունը դասագրքերում, այն իրավիճակը, որում այս պատկերներն են և դրանից բխող իմաստը:

[27] ՀՀ Կառավարություն. (2021). *Հրաման N 136-Ն. Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ*. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

դպրոցի դասաժամերի 24-28%-ը, իսկ միջին դպրոցի՝ 13-16%-ը[28]: Այդ իսկ պատճառով, այս առարկաների համապատասխան դասագրքերն են եղել այս ուսումնասիրության թիրախում:

Երկրորդ ենթաթեմայի՝ *«Գենդերային զգայունության արտացոլումը հայաստանյան բուհերում՝ մանկավարժական մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում»* շրջանակում հետազոտության հիմնական թիրախն է եղել ՀՊՄՀ-ն, քանի որ այն միակ համալսարանն է, որը պատրաստում է մանկավարժներ բոլոր հանրակրթական առարկաների գծով: Հետազոտությունը ուսումնասիրել է ՀՊՄՀ-ի բոլոր առարկաների մանկավարժական կրթական ծրագրերը և ՀՊՄՀ կանոնադրությունը՝ հասկանալու համար, արդյոք համալսարանը ներառում է գենդերազգայուն կառավարման, այդ թվում՝ ուսուցման սկզբունքներ և/կամ նորմավորումներ: Բացի այդ, ուսումնասիրվել են նաև Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ), Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ ԲՊՀ) և «Հայբուսակ» համալսարանների կանոնադրությունները՝ ներկայացնելու համար կանոնակարգային ընդհանուր իրավիճակը:

Երրորդ և վերջին ենթաթեմայի՝ *«Կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ գործընթացում ներգրավված մասնագետների աշխատանքային վերապատրաստման նյութերը և դրանց հիմքում ընկած նորմատիվ իրավական կարգավորումները»* շրջանակում ուսումնասիրվել են ՆԳՆ կրթահամալիրի բոլոր կրթական ծրագրերը, ինչպես նաև համապատասխան բոլոր օրենքները, իրավական ակտերը և կարգավորումները: Համաձայն ՆԳՆ կրթահամալիրի *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին ուղղված պատասխան հրամանի (տես Հավելված 6), ներկայումս ՀՀ ոստիկանությունը չունի քննչական ստորաբաժանումներ, ուստի ուսումնասիրվում է միայն ոստիկանության կրթահամալիրը՝ որպես առանձին կրթակարգ: Առողջապահական հանրային աշխատողի վերապատրաստման ուղին

[28] Ibid., Աղյուսակ 1

հասկանալու համար դիտարկվել են Առողջապահության նախարարության *«Ակադեմիկոս Ա. Ավդալյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»* ՓԲԸ-ի կողմից առաջարկվող վերապատրաստման և ատեստավորման դասընթացները:

Հավելված 2-ը մանրամասն ներկայացնում է, թե յուրաքանչյուր ենթաթեմայում քանի կոդեր են առանձնացվել և այդ կոդերից ինչ հստակ թեմաներ են առանձնացվել, որոնք համապատասխանում են Պատկեր 1-ի «Քայլ 3» և «Քայլ 4»-ին՝ կոդավորում և թեմատիկ բաժանում: Հավելվածում ներկայացված բանալի բառերից բացի, ուսումնասիրված բոլոր նյութերում ուշադրություն է դարձվել օգտագործված իրավական և ուսումնական բառապաշարի չեզոքությանը: Բանալի բառ է հանդիսացել նաև «վերապատրաստում» բառը, քանի որ նպատակն էր ուսումնասիրել ոչ միայն ֆորմալ կրթական համակարգում առկա նյութերը, այլ նաև վերապատրաստման բովանդակությունը:

Ուսումնասիրության արդյունքներ և վերլուծություն

Ենթաթեմա 1. Հայաստանի տարրական և միջին դպրոցներում ոչ խտրական բովանդակության և դասավանդման պրակտիկայի կանոնակարգման պահանջները

«Կրթության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-297) երաշխավորում է կրթության զարգացումը՝ որպես պետականության պահպանման կարևորագույն գործոն, որի հիմքում ազգային դպրոցն է: Նույն օրենքի վեցերորդ հոդվածը հստակ նշում է, որ

> 1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:
>
> 2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
>
> *Հոդված 4. Կրթության բնագավառում պետական*

կրթության իրավունքը տրվում է բոլորին՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից և այլ գործոններից: Բացի այդ, *«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»* ՀՀ օրենքը արգելում է գենդերային խտրականության ուղղակի և անուղղակի դրսևորումները, ներառյալ «գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվության, կրթության և մշակույթի միջոցով» (Հոդված 6), իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածն առանձնացնում է պետական քաղաքականության այն ուղղությունները, որոնք կարևոր են գենդերային հավասարության ապահովման գործում: Այդ ուղղություններից առանձնահատուկ է պետության կողմից գործուն իրավական և կազմակերպական մեխանիզմների ստեղծումը, համապատասխան միջոցառումների իրականացումը, ինչպես նաև գենդերային անհավասարության և խտրականության դեմ ուղղված տեղեկատվության և քարոզչության միջոցով հասարակության պաշտպանությունը, գենդերազգայուն մշակույթի ձևավորումն ու պետական (և այլ) ծրագրերի ներդրումը[29]: Այսպիսով, գենդերային հավասարությունը պետք է արտահայտված լինի ոչ միայն օրենքներում, այլև պետական այլ բովանդակություններում, ինչպիսիք են դասագրքերը, կրթական ծրագրերը և վերապատրաստումները, և կարգավորվի ՀՀ օրենսդրությամբ, իսկ բացթողումների դեպքում՝ միջազգային պայմանագրերի պահանջներով: Օրենքն ու միջազգային պայմանագրերը պետք է դառնան առօրեական քաղաքականություններ: Ուստի, հիմնավորված է այս վերլուծության ընթացքում կրթության քաղաքականության և քաղաքականությունը կարգավորող փաստաթղթերի, ինչպես նաև կրթական ծրագրերի և դասագրքերի համապատասխանության ստուգումը:

Ուսումնասիրված բոլոր օրենքներում բացակայում էր «գենդեր» հասկացության ուղղակի օգտագործումը, սակայն այն փոխարինված էր մի շարք անուղղակի արտահայտություններով, որոնք ընթերցողին պարզ են դարձնում տերմինաբանության ներգրավման նպատակը: Խտրականության բացառումը

[29] ՀՕ-57-Ն. (2023). *ՀՀ Օրենքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին*. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841

ներկայացված է գենդերային չեզոք բառապաշարով, համամարդկային արժեքների ուղղակի և պարբերական մատնանշմամբ, ներառականության և անհատականության շեշտադրմամբ, ինչպես նաև իրավահավասարության և ազատությունների հստակեցմամբ:

Գենդերային չեզոք իրավական բառամթերք

Ուսումնասիրված բոլոր իրավական ուժ ունեցող նյութերը ներկայացված են գենդերային չեզոք բառապաշարով: Ըստ Եվրոպական գենդերային հավասարության ինստիտուտի (EIGE), գենդերային չեզոք բառապաշարը խոսույթում ընդգրկում է տղամարդկանց, կանանց կամ այլ գենդերային ինքնություն ունեցող անձանց՝ առանց դերաբաշխման (n.d.): Օրենքները հիմնականում հստակեցնում են անհատների հավասարությունը, նրանց փոխհարաբերություններն աշխարհի և այլ մարդկանց հետ, ինչպես նաև մարդու և քաղաքացու դերը պետության զարգացման գործում: Օրինակներում և փոխհարաբերություններում նույնպես չի առանձնացվում որևէ գենդերի իրավական կամ մտավոր գերակայությունը մյուսի նկատմամբ: Բառապաշարը բոլոր օրենքներում մնում է նույնը՝ օգտագործելով ընդհանրական բանալի բառեր, օրինակ՝ «անհատ», «անձ», «սովորող», «քաղաքացի», «մարդ» և «աշակերտ»[30]: Գենդերազգայուն կամ գենդերային չեզոք բառապաշար է օգտագործվում նաև պետական կրթական ծրագրերի վերջարդյունքներում: Օրինակ, N44 հրամանի 10-12-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկայի վերջնարդյունքներում օգտագործվում է «գրող-քաղաքացի» եզրույթը:

Գենդերազգայունության պահպանումն օրենքներում, իրավական ակտերում և կրթական ծրագրերում առաջին քայլն է, սակայն, ի հակադրություն, 7-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկայի դասագրքում ներառված են միայն երկու կին հեղինակ՝ Զապել Եսայան և Սիլվա Կապուտիկյան: Ըստ

[30] Օրինակ, և՛ N20 որոշման, և՛ N65 հրամանի մեջ աշակերտի ուսումնական դաստիարակության մեջ կարևորվում է «անհատների» և աշխարհի միջև հարաբերությունների ձևավորումը:

«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (2024), երկար տարիներ միայն Սիլվա Կապուտիկյանին՝ որպես կին գրող, ներառելուց հետո Զապել Եսայանի ներառումը համարվում է ձեռքբերում և ներկայացվում է որպես իրավիճակի բարելավման դրական գնահատական:

Համամարդկային արժեքներ

Հետազոտության այս ենթաթեմայի կարևորագույն կոդերից և թեմաներից էին կրթական համակարգի և հարակից ուսումնամեթոդական ծրագրերի «համամարդկայնությունը» և «մարդասիրությունը»: Այս բառերը ուսումնասիրված նյութերում կրկնվել են մոտավորապես հարյուր անգամ՝ տարբեր հոլովներով և գործածություններով: Ըստ ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի և Մարդու իրավունքների խարտիայի որոշման, համամարդկային իրավունքներն են՝ ազատությունը, արդարությունը, վեճերի և կոնֆլիկտների խաղաղ լուծումը, սոցիալական առաջընթացը, բարելավված կենսամակարդակը, հավասարությունը, հանդուրժողականությունը և արժանապատվությունը:

Այն համամարդկային արժեքները, որոնք ուսումնասիրված նյութերը խրախուսում և երաշխավորում են կրթական համակարգում, ներառում են հանդուրժողականությունը՝ ընկերների, ընտանիքի և առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց նկատմամբ[31], ժողովրդավարությունը[32],

---

[31] ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 44-Ն. *Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին*; ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 80-Ն. *Հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-րդ և 6-րդ դասարանների «Մայրենի», 8-րդ և 11-րդ դասարանների «Հայոց լեզու», 8-րդ դասարանի «Գրականություն», 11-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկաների ծրագրերը հաստատելու մասին*. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=179947

[32] ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին» օրենք.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043; ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

ապրումակցումը, ինքնասիրությունն ու ինքնագնահատումը[33], ինչպես նաև համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակ համադրումը[34]: Բացի այդ, ՀՊՉ-ն[35] նաև նշում է կայուն զարգացումը՝ որպես հասարակության լիարժեք ձևավորման կարևորագույն նախապայման՝ ներառյալ ԿԶԳ 5-ը՝ գենդերային հավասարություն:

ՀՊՉ-ն, մինչ այդ օրենքներում և իրավական ակտերում նշված «համամարդկային արժեքները» բերում է կրթական նոր հարթություն՝ պարզ ներկայացնելով, թե ինչպիսի դաստիարակչական և վերաբերմունքային կրթության մասին է խոսքը: ՀՊՉ-ն նաև նշում է, որ կրթական համակարգը պետք է զարգացնի ինքնաճանաչողական և սոցիալական, ինչպես նաև ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն[36]: Ըստ «Մայրենի լեզվի» վերջնարդյունքների, «մարդակենտրոնությունն» ու «համամարդկային արժեքները» երկրորդ, հինգերորդ և յոթերորդ դասարաններում արտահայտվում են նախորդ դասարանների արժեքների՝ ինքն իրեն և շրջապատին սիրելու և հարգանքով վերաբերվելու հիման վրա: Հինգերորդ դասարանի «Մայրենի լեզվի» վերջնարդյունքներում այն արդեն արտահայտված է «հանդուրժողականությամբ» և բոլորի հանդեպ հոգատարության ցուցաբերմամբ, որը նաև ներկայացվում է արդեն ավելի բարդ փոխհարաբերություններում սոցիալականացմամբ: Ի հավելում, համամարդկային արժեքները նաև ընդգրկված են ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում, որտեղ դրանք ներկայացված են որոշումների կայացման գործընթացում մարդակենտրոնության և **«ոչ ոք չպետք է անտեսվի»** (leaving no one behind) գաղափարախոսությամբ:

Ներառականություն և անհատականություն

Ներառականությունը և անհատականությունների գնահատումը հայկական

---

[33] ՀՕ-62. (2005*). «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենք*. Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820

[34] ՀՀ ԿԳՄՍՆ. (2004). Հրաման N20*. Հանրակրթության պետական կրթակարգի մասին*. Վերցված է՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=25829

[35] ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ*. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

[36] Ibid.

կրթական համակարգում ավելի շատ վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց, քան տարբեր գենդերների հավասարությանը: Պատճառներից մեկը 2005 թվականին ընդունված, սակայն 2015-ին ուժը կորցրած ՀՕ-136-Ն՝ *«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին»* ՀՀ օրենքն է, ըստ որի ներառական կրթությունը նշանակում է *«կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ՝ ապահովելով հատուկ պայմաններ»*[37]: Ըստ նույն օրենքի, ներառականությունն,00, ընդգրկում է միայն մտավոր կամ ֆիզիկական առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաներին և աշակերտներին, մինչդեռ գենդերային հավասարությունը ներառականության մաս չէ: *«Կրթության մասին»* ՀՀ օրենքում ներառականության և մասնակցայնության մասին նշվում է միայն առաջին գլխի վեցերորդ հոդվածի առաջին կետում՝ ամրագրելով կրթության իրավունքի հասանելիությունը բոլորին՝ անկախ առանձնահատկություններից և անհատականություններից[38]: Ներառականության դրսևորումները, ինչպիսիք են կրթության մատչելիությունը, ներառական հանրակրթական քաղաքականության կառուցումը[39], անհատականությունն ու յուրօրինակությունը[40], կրթության մատչելիությունը[41], ինչպես նաև անհատի ֆիզիկական, հոգեբանական և մտավոր կարողությունների գնահատումը[42], լայնորեն ներկայացված են ուսումնասիրված տարբեր

---

[37] ՀՕ-441-Ն. (2022). *«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին*. Վերցված է՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043

[38] ՀՕ-297. (1999*). «ՀՀ Կրթության մասին» օրենք.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043

[39] ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

[40] ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն*. Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788; ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 12-Ն. *ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 65-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175582

[41] ՀՕ-164-Ն. (2005). *«Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» օրենք*. Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=68301

[42] ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

նյութերում:

Հատկանշական է, որ ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում ներառականությունն արդեն նկարագրվում է ավելի մանրամասն՝ ֆիզիկական և մտավոր սահմաններից դուրս՝ հաշվի առնելով այլ գործոններ, որոնք կարող են խանգարել կրթության հասանելիությանը: Այս ծրագիրն ավելի միջսեկցիոնալ է և ներառում է հարցեր, ինչպիսիք են կրթության աշխարհագրական մատչելիությունը, դպրոց հաճախելու խնդիրները, որոնք երբեմն կապված են էթնիկ փոքրամասնությունների, գենդերային անհավասարության, աղքատության, մանկական աշխատանքի և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ առկա կարծրատիպերի հետ:

Վարք և վարվելակերպ

Ուսումնասիրված օրենքներում երեխաների և աշակերտների վարքը կարգավորող հոդվածներն ու կետերը թերի են ներկայացված և կարող են հեշտությամբ դառնալ գենդերային անհավասարության և խտրականության աղբյուր:

ՀՊՉ-ն, ինչպես նաև մի շարք հարակից օրենքներ և իրավական ակտեր երեխայի վարքագծի և դաստիարակության հարցերը համարում են կրթության պատասխանատվություն՝ առանց հստակեցնելու, թե ինչպիսին պետք է լինի արդի քաղաքացին կամ աշակերտը՝ ըստ չափորոշիչների: Չի նշվում նաև, թե ում օրինակով պետք է ձևավորվեն վարքագծային փոփոխություններ նոր սերունդների մեջ: ՀՊՉ-ն ընդգծում է, որ բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատությունների աշխատողները, բացի մասնագիտական որակների ձևավորումից, պետք է նպաստեն նաև պատշաճ վարքի, քաղաքացիական դիրքորոշման և հայրենասիրության ձևավորմանը: Նրանք պետք է դաստիարակեն կրթական գործընթացի միջոցով՝ հետևելով համակեցության կանոններին և նորմերին, ցուցաբերեն հանրօգուտ վարքագիծ և հետևեն կրթության արժեքային բաղադրիչին[43]:

---

[43] ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի*

Միակ բացառությունը ՀՊՉ հինգերորդ գլխի 21-րդ կետն է, որտեղ նշվում է. *«ճանաչի և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասով, հարգի ուրիշ մարդկանց, ընկալի յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ և արժեքավոր լինելը»*: Սակայն այս միակ տողը, որը բնութագրում է «հասարակական վարք» եզրույթը, շատ ուսուցիչներին հնարավորություն է տալիս իրենց պատկերացումների հիման վրա ձևավորել հասարակական վարքը աշակերտների մոտ: Սա, անկասկած, կարող է պարունակել խտրականության նշույլներ, եթե ոչ ամբողջական խտրականություն:

Իրավահավասարություն

Ուսումնասիրված օրենքներում, որոշումներում և հրամաններում գենդերային հավասարությունը հիմնականում արտացոլվում է երկու ուղղությամբ՝ իրավունքների հավասարությունն առանց բացառությունների և յուրաքանչյուրի դերի կարևորությունը տնտեսության և մարդկային կապիտալի զարգացման մեջ: Իրավունքների հավասարությունը, ինչպես նաև դրանց հարգումն ու պաշտպանությունը հստակորեն նշված են մի քանի իրավական փաստաթղթերում: Օրինակ, առարկայական դասընթացների չափորոշիչների հաստատման հրամանում հավասարությունը ներկայացված է *«Հարգի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը»* կետով, որը 7-9-րդ դասարանի հայոց լեզվի առարկայի ակնկալվող վերջնարդյունք է[44]: Կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարությունը հստակեցվում է ՀՊՉ-ում, որտեղ աշակերտից ակնկալվում է հասկանալ և հիմնավորել հասարակության մեջ կանանց և տղամարդկանց հավասարության ու հավասար հնարավորությունների ընձեռնման նշանակությունը:

հաստատման կարգ. Հոդված 19, կետ 3; Գլուխ 2, կետ 6; Գլուխ 4, կետ 10.22; Գլուխ 6, կետ 13.4. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

[44] ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 44-Ն. *Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին*.

Միևնույն ժամանակ, *«Կրթության մասին»* ՀՀ օրենքը սահմանում է իրավահավասարությունը որպես կրթության ոլորտում օրենսդրության խնդիր՝ *«իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը»*[45]: *«Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին»* ՀՀ օրենքը ևս սահմանում է, որ կրթության մեջ ներգրավված բոլոր օբյեկտներն ու սուբյեկտներն իրավահավասար են: Իրավունքների իրացումը, դրանցից բխող պարտականությունների համակարգային հետևումը կարևորվում է ուսումնասիրված գրեթե բոլոր նյութերում[46]:

Իրավահավասարության ուղիղ կարևորությունից բացի, այն կարևոր է նաև տնտեսական տեսանկյունից: Առարկայական չափորոշիչներում կարևորվում է երկարաժամկետ ուսուցումը, քանի որ այն յուրաքանչյուր անձի դարձնում է ավելի ռեսուրսառու և կարևոր տնտեսական զարգացման համար: Բացի այդ, ուսումնասիրված նյութերն ու օրենքները շեշտադրում են նաև հավասարության տնտեսական առավելությունները: Օրինակ, կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարությունը դիտարկվում է միևնույն նժարի վրա, երբ խոսվում է մասնավոր ձեռնարկատիրությունների, ազգային տնտեսության և համաշխարհային տնտեսության մասին, ինչպես նաև դրանց միջև համակարգում իրականացնող պետության դերի մասին: Այստեղ կանանց և տղամարդկանց իրավունքները դիտարկվում են որպես տնտեսական և հասարակական

---

[45] ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին» օրենք*. Հոդված 2.4. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043

[46] ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 12-Ն. *ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 65-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175582; ՀՕ-164-Ն. (2005). *«Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» օրենք*. Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=68301; ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին»* օրենք. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043, ; ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788; ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 44-Ն. *Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին.*

փոխհարաբերությունների և փոխազդեցությունների արդյունք[47]:

Այս ամենին ի հավելում, *«Կրթության մասին»* ՀՀ օրենքը և *ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրն* առանձնահատուկ կարևորություն են տալիս մարդկային կապիտալի զարգացմանը, որը բացառում է գենդերային անհավասարությունը: *«Կրթության մասին»* ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը՝ արտադպրոցական կրթության մասին, ներկայացնում է այն արժեքները, որոնց զարգացումը համարվում է կարևորագույն խնդիր:

> «Ծրագրի կենտրոնում մարդն է, իսկ նրա կարողությունների ընդլայնումը՝ մարդկային կապիտալը զարգացնելու և իրացնելու միջոց... անհատի բարեկեցության ապահովման, երկրի տնտեսական աճի, սոցիալական առաջընթացի և պետության ամրապնդման գրավական ու շարժիչ ուժ՝ մարդկային զարգացման համաթվի առումով ներառելով երկիրը աշխարհի առաջատար երկրների շարքում»:
>
> *ՀՕ 441-Ն՝ ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր*

Այսպիսով, իրավահավասարությունը և գենդերային հավասարությունը դառնում են ոչ թե նպատակ, այլ մարդկային կապիտալի ամբողջական օգտագործման միջոց, ներառելով բոլոր գենդերներին[48]: Գենդերային հավասարությունը իրավական տեսանկյունից նաև դիտարկվում է որպես կրթության որակի չափանիշ, որը պետք է տրամադրվի պոտենցիալ մարդկային կապիտալ ներկայացնող երեխաներին[49]: Սակայն, չնայած իրավական հավասարության առկայությանը, որևէ ուսումնասիրված նյութ չի ներկայացնում ֆինանսական բաշխման արդարությունը պատկերող սխեմա կամ կարգավորող մեխանիզմ: Նույնիսկ պետական ուսումնական դասագրքերում կանայք ներկայացված են կարծրատիպային և տնտեսապես ոչ մրցակցային

---

[47] ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788

[48] ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին»* օրենք. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043; ՀՀ Կառավարություն. (2021). Հրաման N 136-Ն. *Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788; ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). Հրաման N 44-Ն. *Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին;* ՀՕ-441-Ն. (2022*). «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին*. Վերցված է՝ *https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043*

[49] ՀՕ-62. (2005). *«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենք*. Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820

աշխատանքներ կատարելով:

Դասագրքեր. օրենքներ թղթի՞ վրա

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նշում է, որ *«կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանն ու զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը»*[50]: Հետևաբար, դասագրքերի և կրթական բովանդակության ուսումնասիրությունն անմիջականորեն կարևոր է՝ հասկանալու, թե արդյոք կրթական համակարգը գենդերազգայուն և իրավահավասար է:

Կրթական դասագրքերի ուսումնասիրության ընթացքում պարզ դարձան ***երեք բանալի թեմաներ***, որոնք կապակցված են իրավական կարգավորումներին և պետք է խրախուսեն խտրականության բացակայություն և գենդերային իրավահավասարություն: Առաջին թեման, որ բացահայտվել է ուսումնասիրության արդյունքում, դասագրքերում կնոջ և տղամարդու արդեն իսկ կարծրացած հասարակական դերերի ամրապնդումն է: Դասագրքերից շատերում կնոջ և տղամարդու դերերը հստակորեն բաժանված են. կինը հաճախ ներկայացվում է որպես տնային տնտեսուհի, իսկ տղամարդը՝ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչ, մինչդեռ բուն օրենքներն ու իրավական կարգավորումները պահանջում են իրավահավասարություն, որն իր հերթին նպաստում է երկրի տնտեսական աճին: Կնոջ կերպարը դասագրքերում ներկայացված է որպես տատիկ, մայրիկ, աշակերտուհի, պարուհի կամ տնային այլ աշխատանքներ իրականացնող անձ, իսկ տղամարդկանց կերպարները

[50] ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին» օրենք*. Հոդված 11. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043

հիմնականում արտացոլում են սոցիալական նորմերն ու կարծրատիպերը: Օրինակ, «Մայրենի 2» դասագրքում պատկերված է ջուր տանող կին՝ քամիչով, մինչդեռ տղամարդիկ նույն հարթակում շախմատ են խաղում (էջ 34): Նույն դասագրքում՝ մաս առաջին, երկու տարբեր ընտանիքներում կնոջ կերպարը մշտապես ուտելիք պատրաստողի դերում է (էջ 75): Տղամարդը նաև կրում է այլ պաշտոններ, օրինակ հոգատար ոստիկանի[51], ֆուտբոլիստի[52], պատմական հերոսների և այլն, իսկ կնոջ կերպարի բազմազանությունը սահմանափակվում է ուսուցչուհու կերպարով:

Ուսուցչուհու կերպարը հարկ է քննարկել առանձին: Օրինակ՝ հինգերորդ դասարանի «Մայրենի» դասագրքում ուսուցչի կերպարում մշտապես կանայք են, ինչը լիովին հակասում է *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահի ԿԳՄՍՆ ուղղված պատասխան հրամանի (տես Հավելված 5) այն պնդմանը, որ դասագրքերում գենդերային դերերի բաշխումը բացառված է: Ուսուցչուհու կերպարում միայն իգական սեռի ներկայացվածությունը ոչ միայն խտրական է կանանց, այլ նաև այն տղամարդկանց նկատմամբ, ովքեր ուսուցիչներ են:

[51] Սարգսյան, Ա. Վ., Ջիլավյան, Ե., & այլոք. (2023). *Մայրենի 2*. «Քվանտ Վարժարան» հրատարակչություն. էջ. 40 և էջ. 154. Վերցված է՝ https://lib.armedu.am/article/15288
[52] Ibid., էջ. 14

Պատկեր 2. Կնոջ կերպարը «Մայրենի» և «Հայոց լեզու» դասագրքերում

Նույն իրավիճակն է յոթերորդ դասարանի «Հայոց լեզու» դասագրքում, որտեղ ուսուցիչը միայն կնոջ կերպարով է ներկայացված: Այս ուսուցչուհու պատկերը կրկնվում է յուրաքանչյուր քերականական բաժնի անկյունում: Յոթերորդ դասարանի «Հայոց լեզու» առարկայում ևս ուսուցիչը ներկայացված է միայն կնոջ դերում: Նման իրավիճակ է նաև «Մայրենի 2» դասագրքում, որտեղ առաջին իսկ էջում ուսուցչուհին կրկին կին է (տե՛ս Պատկեր 1): Նման պատկերները սահմանափակում են թե՛ աղջիկների, թե՛ տղաների երազանքները՝ ցույց տալով, որ մասնագիտությունները սահմանափակված են կենսաբանական սեռով:

Երկրորդ՝ չնայած ՀՊՉ-ի շրջանակում մեծ ակնկալիքներին, դասագրքերը շարունակում են դնել հստակ դերային ակնկալիքներ յուրքանչյուր կենսաբանական սեռի առջև՝ սահմանափակել յուրաքանչյուր սեռի սոցիալական դերը: Կնոջ կերպարը ներկայացված է որպես արքայադստեր կամ ամուսնության համար պայքարող, տնային գործերով զբաղվող, սիրուն, գեղեցիկ, համեստ, երգեցիկ աղջիկ, որի ինքնության մեջ արդեն կարելի է տեսնել ապագա «հիասքանչ մայր» կերպարը: Մինչդեռ տղաները պատկերված են որպես քաջ, խորամանկ, և առավելապես զինվորական կերպարներում, որոնց շարքում ոչ միայն մեկ, այլ մի քանի զինվորներ կան՝ խորհրդանշելով կրթության «ռազմականացումը», և միաժամանակ անտեսելով իգական սեռի ներկայացուցիչ զինվորներին: Օրինակ, «Մայրենի 2»-ում միայն տղաներն են ուս ուսի տալիս և միայն տղաներն են գյուղով գերան կոտրում (էջ 21), միայն տղաներն են ոստիկաններ, և տղամարդիկ են պատմական հերոսներ (տե՛ս Պատկեր 2):



Պատկեր 2. «Մայրենի լեզու» դասագրքում հերոսների նկարագրության բաժին

Դասագրքի հաջորդող հատվածներում նույնպես միայն արական սեռի հերոսներ են արծարծվում, օրինակ՝ Հայկ Նահապետը, Սասունցի Դավիթը, Արգիշտի թագավորը, Մեսրոպ Մաշտոցը, պապիկը, հայրիկը… հայրենիքը ևս մեկ անգամ հայրակենտրոն է: Ցավոք, այս դասագրքում ոչ միայն հերոսներն են միայն արական սեռի ներկայացուցիչներ, այլ նաև նրանց օրինակել ցանկացողները: Օրինակ, տարվում են համեմատություններ Հայկ Նահապետի և Արմենի միջև (էջ

56), Արգիշտի թագավորի և Արգիշտիի միջև (էջ 66), գիրքը համոզում է Արային և ներկայացնում Մեսրոպ Մաշտոցին և այլն: Կանանց մասին միակ հիշատակը 72-րդ էջում է՝ Հռիփսիմե և Գայանե կույսերի մասին, որոնց անուններն անգամ չեն նշվում: Մնացած հատվածներում կանայք կրկին հայտնվում են փայփայողի, անկարևոր և լուսանցքային դերում:

Կրթական բովանդակությունից դուրս, դպրոցի պարտադիր գրականության մեջ ներկայացված են միայն հինգ կին գրողներ: «Մայրենի 5»-ում կին գրողներից ներառված են ընդամենը երեք ստեղծագործություններ, մինչդեռ տղամարդկանց՝ 19 (իսկ ևս 4-ը անհայտ գրողներ են): «Գրականություն 7»-ում կին գրողներ ներկայացված են միայն երկուսը, և թիվն էլ հավելվել է վերջերս, երբ Զապել Եսայանը նույնպես ներգրավվել է կրթական համակարգում: Այսպիսով, կրթական բովանդակությունից դուրս, դպրոցական պարտադիր գրականության մեջ միայն հինգ կին գրող է ներկայացված:

Ենթաթեմա 2. Գենդերային զգայունության արտացոլումը հայաստանյան բուհերում՝ մանկավարժի մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում:

Հայաստանում կրթության կազմակերպումը իրականացվում և կարգավորվում է ոչ միայն պետական օրենքների և իրավական ակտերի միջոցով, այլ նաև յուրաքանչյուր կրթական հաստատությանը տրված՝ կրթությունը կառավարելու ազատության և անկախության հնարավորությամբ: ՀՀ-ում գործող բոլոր պետական կրթական հաստատությունները պարտավոր են ունենալ կրթությունը կարգավորող փաստաթուղթ՝ կրթական կանոնադրություն, որը ներկայացնում է գործողությունների մանրամասն նկարագրությունը և փորձում լրացնել կրթական օրենսդրության և կրթության բուն կազմակերպման միջև առկա բացը:

Ուսումնասիրված նյութերում՝ համալսարանական կանոնադրություններում և մանկավարժներ պատրաստող կրթական ծրագրերում,

գենդերային զգայունությունը հիմնականում արտահայտվում է կրթական բոլոր շահագրգիռ կողմերի իրավահավասարության, բարեվարքության պահանջների և համամարդկային արժեքների ներդրման միջոցով:

Իրավահավասարություն

Այս ուսումնասիրության մեջ իրավահավասարությունը ներկայացված է երեք ուղղությամբ՝

1. Իրավահավասարությունը օրենքներում և իրավական ակտերում,
2. Իրավահավասարությունը համալսարանական կանոնադրություններում,
3. Իրավահավասարությունը ՀՀ ՀՊՄՀ-ի կրթական և անհատական առարկայական ծրագրերում:

Օրենքներում և իրավական ակտերում իրավահավասարությունը ներկայացվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորում և պարտականությունների հարգում: Իրավահավասարության այս ընկալումը արտահայտված է, օրինակ, *«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին»* ՀՀ օրենքներում և հարակից իրավական ակտերում:

Իրավահավասարությունն ուսումնական հաստատություններում ներկայացվում է անհատական ուսումնական հաստատությունների կանոնադրություններով և ներքին քաղաքականություններով, ինչպես, օրինակ, ՀՊՄՀ-ի *«Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի»* կանոնադրությունը: Նույն կերպ կարգավորում են նաև Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանը (այսուհետ՝ ԲՊՀ) և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (այսուհետ՝ ԵՊԲՀ): Իրավիճակը մի փոքր այլ է «Հայբուսակ» համալսարանում, որտեղ կանոնադրությունն ինքնին ներառում է *«Էթիկայի կանոններ»*, որոնց շրջանակում ներկայացված են «*Բազմազանության, հավասարության և ներառականության»* (Diversity-Equity-Inclusion) կետեր: Այս կանոնադրությունը պահանջում է յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ հավասար վերաբերմունք

ցուցաբերել և հավասար հնարավորություններ ապահովել[53]: ԵՊԲՀ-ում գենդերազգայունությունն արտահայտվում է բռնության բացառումը կարգավորող կետերով, ինչպես նաև էթիկայի կանոնագրքով: ԵՊՀ հիմնադրամի ներքին կարգապահական կանոնների մեջ հստակ ներկայացվում է բռնության և սեռական ոտնձգությունների արգելքը բոլոր կողմերի միջև[54]: ԵՊՀ կանոնադրությունում գենդերազգայունության և հավասարության դրսևորում կարելի է համարել *«համակեցության, բարոյականության, էթիկայի, ակադեմիական ազնվության և բարեվարքության նորմերը»,* որոնք, ըստ միջազգային բնորոշման, պետք է ներառեն գենդերային հավասարություն և խտրականության բացառում: ԵՊՀ Ներքին կանոնակարգը փոխկապակցված է նաև ԵՊՀ էթիկայի կանոնագրքի հետ, որտեղ «հավասարությունը» դիտարկվում է որպես արդարության և սոցիալական արդարության բաղադրիչ: Կանոնագրքի 12-րդ կետում նշվում է, որ սոցիալական գործընկերությունը, որը համալսարանի էթիկայի գլխավոր սկզբունքն է, պետք է ապահովվի՝ նպաստելով սոցիալական հավասարության և համերաշխության հաստատմանը: ԵՊՀ-ում հավասարության և խտրականության հարցերը կարգավորվում են նաև այլ արդեն կանոնադրական հոդվածներով[55]:

Իրավահավասարության հաջորդ ուղղությունը վերաբերում է ՀՊՄՀ-ում ուսուցանվող և ապագա ուսուցիչներ պատրաստող բոլոր կրթական ծրագրերում գենդերազգայունության առկայությանը կամ բացակայությանը: Ուսումնասիրված ՀՊՄՀ-ի 16 ծրագրերից «Հայոց լեզու և գրականություն» ուսուցանող ապագա մանկավարժները, ըստ ծրագրային պլանների, որոնք ստացվել են *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին ուղղված պատասխան հրամանին (տե՛ս Հավելված 7) կից, չեն ուսումնասիրելու իրենց իսկ իրավունքներն ու հավասարությունները: Նույն իրավիճակն է նաև «Ֆիզիկա» և

---

[53] Համալսարանական խորհուրդ. (2022). *«Հայբուսակ» համալսարանի էթիկայի կանոնագիրք:* Վերցված է՝ https://haybusak.am/wp-content/uploads/2023/07/R01-YHU-Code_of_Ethics-EN.pdf
[54] ԵՊՀ. (2023). *ԵՊՀ կանոնադրություն:* Վերցված է՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2023/02/University_Charter-2023_02_13.pdf; ԵՊՀ. (2021). *ԵՊՀ Բարեվարքության կանոնակարգ:* Վերցված է՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2021/12/Ethics-code.pdf
[55] ԵՊՀ. (2023). *ԵՊՀ կանոնադրություն.* էջ. 3: Վերցված է՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2023/02/University_Charter-2023_02_13.pdf

«Կենսաբանություն» առարկայական ծրագրերում: Ուսումնասիրված առարկայական ծրագրերից միայն երեքում է հստակ նշվում, որ մարդու իրավունքները և իրավահավասարության ընկալումն ու կիրառումը կրթության կառավարման գլխավոր գործիք և հաջողության գրավական են:

ՀՊՄՀ-ի բոլոր բաժինների առարկայական ծրագրերում գենդերազգայունության հետ խաչվող, անուղղակի հավասարություն քարոզող կետերը ներկայացված են Հավելված 3-ում:

Բարեվարքություն

Ըստ *«Կրթության մասին»* ՀՀ օրենքի՝ կրթության քաղաքականության սկզբունքներից են մարդասիրության, համամարդկային արժեքների, անհատի ազատ և համակողմանի զարգացման, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության և օրինականության դաստիարակությունը[56]: *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքը ևս նշում է, որ մանկավարժական աշխատողը պարտավոր է պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ ձևավորել երեխաների մեջ, ինչպես նաև նրանց դաստիարակել հայրենասիրությամբ[57], որը դիտվում է որպես բարեվարքության դրսևորում: Ուսումնասիրված կրթական կանոնադրություններում բարեվարքության այս դրսևորումներն ակնկալվում են և՛ ուսանողի, և՛ դասախոսական կազմի կողմից: Ըստ ՀՀ օրենսդրության, սա պետք է ապահովվի համաձայն *«Կրթության մասին»* ՀՀ օրենքի, պետական չափորոշիչների, և արդեն համալսարանական մակարդակում՝ բոլոր ուսումնական կանոնադրությունների միջոցով: Ինչպես օրինակ՝ ըստ ԵՊԲՀ-ի ընդհանուր կանոնադրության գիտահետազոտական անձնակազմը պարտավոր է սովորողների շրջանում ձևավորել մի շարք սոցիալականացման համար կարևոր հատկանիշներ՝ ներառյալ պատշաճ վարք և վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում և հայրենասիրություն[58]:

---

[56] ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին»* օրենք. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043
[57] Ibid., Հոդված 27, կետ 2.9
[58] ՀՕ-297. (1999*). «ՀՀ Կրթության մասին» օրենք*.Հոդված 27, կետ 3. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043

Բարեվարքությունը կարևոր մաս է կազմում նաև «Հայբուսակ» համալսարանի էթիկայի կանոնագիրք, ԵՊՀ կանոնադրության և էթիկայի կանոնագրքի, ինչպես նաև ներքին կարգապահական կանոնների և ՀՊՄՀ ընդհանուր կանոնադրության: Բարեվարքության չպահպանումը, օրինակ՝ ըստ ԵՊՀ ընդհանուր կանոնադրության, էթիկական խախտում է, որը պետք է քննարկվի և պատժվի էթիկայի հանձնաժողովի կողմից:

Ստացվում է բարեվարքությունը կարող է ունենալ երկու ընկալում՝

1. Բարեվարքությունը՝ որպես գենդերային հավասարության և խտրականության բացառման միջոց, որը հիմնավորվում են վերոնշյալ օրենքները, կանոնակարգերն ու իրավական ակտերը, և
2. Բարեվարքությունը՝ դաստիարակության ընկալման սուբյեկտիվ տարբերությունները հնարավորություն են տալիս որոշելու հասարակությունում բարեվարքության չափանիշները՝ դառնալով անհավասար և խտրական սերունդների ձևավորման հիմք:

Համամարդկային արժեքներ

ՀՀ օրենքներն ու իրավական ակտերը կառուցված են «համամարդկայնության» և «մարդասիրության» արժեքների վրա: Ցանկացած ուսումնական ծրագիր և կանոնակարգ պետք է բխի առկա օրենսդրությունից: Հետևաբար, եթե ՀՊՉ-ն պահանջում է, որ ուսումնադաստիարակչական մեթոդներով ուսուցիչները պետք է ապահովեն արժեքային բաղադրիչը՝ ազգային և համամարդկային արժեքների սերմանմամբ, ապա բոլոր ուսումնական փաստաթղթերը պետք է արտացոլեն նույն արժեքային համակարգը: «Համամարդկայնությունը» ոչ միայն հաճախ է հանդիպում կանոնակարգերում որպես ուսումնական ընդհանուր նպատակ, այլև ընդգրկված է որոշ ՀՊՄՀ-ի տարեկան ուսումնական ծրագրերում (բակալավրիատի ծրագիր (այսուհետ՝ ԲԿԾ) և մագիստրատուրայի ծրագիր (այսուհետ՝ ՄԿԾ) Հասարակագիտություն, ԲԿԾ և ՄԿԾ Ինֆորմատիկա, ՄԿԾ Քիմիա):

Կանոնադրություններում և կրթական ծրագրերում համամարդկային

արժեքը հաճախ անջատ է դիտարկվում մարդու իրավունքների պաշտպանությունից և չունի անհատական բացվածք: Քանի որ ցանկացած կրթական փաստաթուղթ դիտարկվում է ՀՊՉ տեսանկյունից, այստեղ նույնպես համամարդկային արժեքները կարելի է դիտարկել որպես արդարության, խտրականության բացակայության, գենդերազգայունության, ներառականության և բարության իրավական հիմք:

Կանոնադրություններում համամարդկային արժեքները, ներառյալ հավասարությունը, ներկայացված են երկու հիմնական ուղղությամբ՝

1. Համամարդկային արժեքները՝ որպես բռնության բացառման գրավական
2. Համամարդկային արժեքները՝ որպես վարքագծային փոփոխությունների հիմք

Բռնության բացառում. գենդերազգայունության առաջին նախապայմաններից մեկը մասնակից բոլոր խմբերի համար ապահով պայմանների ստեղծումն է, հատկապես կանանց և աղջիկների համար՝ մեծ համալսարաններում և բարդ մարդկային ու համալսարանական փոխհարաբերությունների մեջ: Ուստի, սեռական ոտնձգություններից պաշտպանությունն աշխատանքային հարաբերություններում և ուսումնական գործընթացում առաջնահերթ է: Օրինակ, ԵՊՀ-ն այս ամենը կարգավորում է ներքին կանոնակարգով, ըստ որի «ԵՊՀ-ում արգելվում է բռնությունը՝ իր բոլոր դրսևորումներով» (էջ. 1): Նմանատիպ կարգավորումներ ունի նաև «Հայբուսակ» համալսարանը, ըստ որի՝ էթիկայի կանոնագրքի, համալսարանը պետք է ապահովի երկկողմանի օգնության և ապահովության զգացում՝ ուսանողության և դասախոսական կազմի միջև (էջ. 1): Ի հակադրություն, ԲՊՀ-ում չկա որևէ կետ բռնության կամ խտրականության կանխարգելման վերաբերյալ, ինչպես նաև չկա կանանց ներգրավվածության պարտադիր պահանջ՝ քվոտա գիտական խորհրդում: Ուսումնասիրված կանոնակարգերում բռնության բացառումը հիմնականում ներկայացվում է պատշաճ վարքագծի և վարքագծային նորմերի միջոցով՝ համապատասխան համամարդկային արժեքների և դրանց նկատմամբ հարգանքի ապահովմամբ:

Վարքագծային փոփոխություններ. ուսումնասիրված գրեթե բոլոր ուսումնական տարեկան ծրագրերն ու կանոնակարգերը դիտարկում են

աշակերտին և սովորողին որպես փոփոխվող սուբյեկտներ, որոնց դաստիարակությունը և վարքագիծը մեծապես կախված է մանկավարժի և կրթողի ազդեցությունից: Կանոնակարգերն ու տարեկան ծրագրերը՝ հիմնված ՀՊՉ-ների և կրթական օրենսդրության վրա, նպատակ ունեն դաստիարակելու պատշաճ վարքագիծ ունեցող երիտասարդների: Օրինակ, ԵՊՀ-ն նպատակ ունի զարգացնելու սովորողի հոգևոր, բարոյական և մտավոր կարողությունները, իսկ ՀՊՄՀ-ում վերահսկվում են ուսումնադաստիարակչական աշխատանքները (էջ 7):

Տարեկան կրթական ծրագրերում վարքագծային փոփոխությունները ներկայացվում են նաև որպես ծրագրային կրթական վերջնարդյունքներ: Վարքագծային փոփոխություն ձևավորելու համար յուրաքանչյուր մանկավարժ պետք է կարողանա ուսումնասիրել, պատկերացնել և ներկայացնել անձը՝ որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, ընդունելով նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները և սոցիալականացման օրինաչափությունները, նրա վրա ազդող ներքին և արտաքին գործոնները[59]: Ներքին և արտաքին գործոնները կարող են ներառել, օրինակ, երեխայի հոգեբանությունը (ներքին գործոններ) և ազգային, համամարդկային, սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական գործոնները (արտաքին գործոններ): ՀՊՄՀ-ի մանկավարժական կրթական ծրագրերում սովորողը դիտարկվում է որպես սուբյեկտ, որը կարգավորվում է ուսուցիչ-սուբյեկտ փոխհարաբերություններով, որոնք պարտավոր է զարգացնել համալսարանը: ՀՊՄՀ-ում հասարակագիտության բաժնի ուսումնական ծրագրի համաձայն՝ նման դասապրոցեսը սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերությունների արդյունք է, որի շնորհիվ երեխայի կամ սովորողի մեջ ներդրվում են արդի վարքագծային փոփոխություններ: Նմանատիպ փոփոխությունների շնորհիվ ուսումնական ծրագրերն ու կանոնադրությունները կարող են դառնալ գենդերազգայուն կամ ինտերսեկցիոնալ:

---

[59] ԲԿԾ և ՄԿԾ Հասարակագիտություն, ՄԿԾ Կենսաբանություն, ԲԿԾ Ինֆորմատիկա, ԲԿԾ Հայոց լեզու, ԲԿԾ և ՄԿԾ Մաթեմատիկա, ՄԿԾ Քիմիա, ՄԿԾ Պատմություն, ՄԿԾ Ֆիզիկա

Ենթաթեմա 3. Կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ գործընթացում առնչվող մասնագետների աշխատանքային վերապատրաստման նյութերը և դրանց հիմքում ընկած նորմատիվ իրավական կարգավորումները

Կանանց և աղջիկների հանդեպ ընտանեկան բռնությունը Հայաստանում սոցիալական կարևորագույն խնդիրներից է, որը հատկապես աղմկահարույց դարձավ, երբ 2017 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց *«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին»* ՀՀ օրենքը: Օրենքի գերնպատակը ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանությունը, բռնարարների պատիժն ու բռնության կանխարգելման ուղղությամբ աշխատանքների իրականացումն էր: Օրենքը նաև ենթադրում է բռնության ենթարկվածների համար ապաստանների տրամադրում և հետագա պաշտպանություն: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը ներառում է Կանանց ռեսուրս կենտրոնների հիմնադրում, որոնք պետք է դառնան բռնության ենթարկված կանանց ապաստարաններ[60]: Օրենքում նաև հստակ նշվում են առանձնահատուկ կարևորության անձանց և ստորաբաժանումների կարևորությունը օրենքի նպատակին ծառայելու համար, այդ ստորաբաժանումներից մեկն է ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը[61]:

Բռնությունը, որը առաջնային գենդերային անհավասարության հետևանք է, պաշտպանված է մշակութային կարծրատիպերով, որոնք դժվարացնում են դրա նշանառումն ու կանխարգելումը: Չնայած *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»* ՀՀ

[60] ՀՀ Կառավարություն. (n.d.). Որոշում N2300-L, *ՀՀ Կառավարության 2023 թվականի Նոյեմբերի 18-ի N-1902-L որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068

[61] Ibid.

կառավարության որոշման նախագիծը պնդում է, որ ՀՀ Քննչական կոմիտեն քննել է ընտանեկան բռնության 1051 վարույթ (2024), այս թիվը միայն արհեստականորեն է ներկայացնում ընտանեկան բռնության ցուցանիշը և չի կարող օգտագործվել որպես քննչական կոմիտեի կամ ոստիկանության արդյունավետության ապացույց կամ երկրում ընտանեկան բռնության աճի ցուցանիշ: Ընտանեկան բռնության և կանանց ու աղջիկների նկատմամբ բոլոր տեսակի բռնության դեպքերի մեծ մասը մնում է անբացահայտ՝ ելնելով առկա սոցիալական պատասխանատվությունից, հասարակական քննադատությունից և «ընտանիքի/ազգային արժեքներ»-ի թյուրըմբռնումից:

Ընտանեկան բռնությունը կարող է ներառել սեռական, տնտեսական, հոգեբանական և ֆիզիկական բռնության ձևեր: Համաձայն Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ պատրաստված ուղեցույցի, օրինակ ընտանեկան բռնության դեպքում, բռնությունից պաշտպանության երեք տեսակ գոյություն ունի՝ (1) նախազգուշացում, (2) միջամտություն և (3) պաշտպանական որոշում[62]: Բոլոր երեք ուղղություններում էլ ոստիկանության դերը առաջնային է՝ և՛ որպես նախազգուշացնող, և՛ որպես կանխարգելող, և՛ պաշտպանող մարմին: Հաշվի առնելով կանանց և սեռականության, ընտանեկան բռնությունների և ընտանեկան հարաբերությունների ընկալման տարաբնույթ կարծիքները, ինչպես նաև ոստիկանական համակարգի բարդ կառուցվածքը, կարևոր է, որ բոլոր ոստիկանական սպայակազմը պատրաստ լինի քննչական ցանկացած աշխատանք իրականացնել առանց «ավանդական» կարծրատիպերի՝ գործածելով առկա իրավական մեթոդները: Օրինակ, եթե ոստիկանությունը ստանում է բռնության դեպքի մասին ահազանգ, այն պարտավոր է գործել ըստ օրենքի, այլ ոչ թե փորձել հարցը լուծել համայնքային կապերի միջոցով: Սա ստիպում է շատ կանանց և աղջիկների դիմել ոստիկանություն միայն ծայրահեղ դեպքերում, երբ այլ ելք չկա, քանի որ չկա վստահություն դեպի ոստիկանություն, հատկապես համայնքային

---

[62] Ուիլս, Է., Գասպարյան, Ա., & Մաթոսյան, Ա. (2018*). Ոստիկանության արձագանքը Հայաստանում կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը: Գործնական ձեռնարկ Հայաստանի ոստիկանության համար.* Եվրոպայի խորհուրդ. Վերցված է՝ https://rm.coe.int/coe-police-response-to-vaw-and-dv-in-armenia-handbook-arm-14-12-2018-2/pdf/1680af8171

ոստիկանական բաժանմունքներում: Այս ուսումնասիրության նյութերը դիտարկվում են կոմունալ համայնքում գործող ուժային հարաբերություններից դուրս՝ հասկանալու համար, թե ինչպես են ուսումնասիրված նյութերը կրթում ոստիկանական սպային կամ առողջապահության կազմակերպման պատասխանատուներին:

Ուսումնասիրված նյութերի և օրենքների վերլուծության արդյունքում վերապատրաստման և ուսուցման բովանդակությունը կարելի է դիտարկել չորս հիմնական ուղղություններով՝ (1) բռնության կանխարգելում, (2) իրավահավասարություն, (3) բարեվարքություն և բարոյականություն, և (4) շարունակական կրթություն:

Բռնության կանխարգելում

Ըստ միջին մասնագիտական կրթության 1032.01.5 *«Ոստիկանական գործ»* մասնագիտության և «Ոստիկանական սպա» որակավորման պետական կրթական չափորոշչի (այսուհետ՝ ՊԿՉ), «ոստիկանության սպա» որակավորում ստացած մասնագետը կատարում է համայնքային ոստիկանության տեսուչի, ինչպես նաև անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչի պարտականությունները: Այս մասնագիտության հիմնական նպատակներն են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, անվտանգության ու գաղտնիության ապահովումը, ինչպես նաև հանցագործությունների պատշաճ արձանագրումը և վերաբերումը: ՊԿՉ-ներում հստակ նշվում է, որ այս որակավորման մասնագետները պարտավոր են ուշադրություն դարձնել ընտանիքում բռնության բոլոր դեպքերին, վերլուծել իրավիճակը և ներկայացնել համապատասխան առաջարկներ: Ներկայումս, երբ ոստիկանությունը փորձում է ներդնել բողոքների հաշվառման կանոնակարգված համակարգ, «մարդկային սխալի գործոնը» կրճատվելու հնարավորություն ունի, եթե սպաները պահպանեն մասնագիտական էթիկան և չկեղծեն տվյալները կամ չխախտեն իրենց տված մասնագիտական երդումը:

Ոստիկանական կրթակարգում ներառված են 30 մոդուլներ[63], որոնք նպատակ ունեն պատրաստել բազմակողմանի պատրաստվածություն ունեցող ոստիկանության սպա: Այնուամենայնիվ, միայն որոշ մոդուլներում է հստակ նշվում, թե ինչպես պետք է գործել բռնության ենթարկված կանանց և աղջիկների հետ: Կրթակարգի առաջին մոդուլը, որտեղ քննարկվում է կանանց և աղջիկների հանդեպ բռնությունը, դա *«Մասնավոր իրավունքի հիմունքներ»* մոդուլն է՝ 34 ժամ տևողությամբ: Այս մոդուլում ընդգրկված են քաղաքացիական իրավունքի մանրամասներ, ազատությունների և սահմանափակումների հակադրությունը, ինչպես նաև ամուսնության իրավական կարգավորումները ՀՀ-ում, որտեղ նշված է կանանց և աղջիկների հանդեպ բռնությունը՝ որպես առանձին թեմա:

Մոդուլ 14-ը անդրադառնում է կրիմինոլոգիայում փոխհարաբերություններին՝ ներկայացնելով բռնի հանցագործությունների հիմքերը և տեսակները: Բարդ է հստակ հասկանալ, թե որքան արդյունավետ են դասավանդվում այս մոդուլները, սակայն դրանց շրջանակներում ընտանեկան բռնության կանխարգելումը պատշաճ ժամաքանակով ներկայացված է: Բռնության հասկացությունը քննարկվում է նաև համայնքային ոստիկանության գործունեությունը ներկայացնող 25-րդ մոդուլում, որտեղ անդրադարձ է կատարվում քաղաքացիների վստահությունը վաստակելու խնդիրներին: Հայաստանում սոցիալական և պատմական հիմք ունեցող անվստահությունը դեպի ոստիկանություն ընդգրկված է այս մոդուլում: Կրթահամալիրի կրթակարգում ավելի քան 100 ժամ տրամադրված է օպերատիվ հետախուզական գործունեության ընթացքում գաղտնիության պահպանմանը (Մոդուլ 27): Վերջին երկու մոդուլները՝ Մոդուլ 29 *«Ընտանեկան բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելում»* և Մոդուլ 30 *«Թրաֆիքինգ և դրա կանխարգելում»,* մանրամասն քննարկում են բռնության ենթարկվածների պաշտպանության միջոցները, ներառյալ գաղտնիությունը,

[63] ՀՀ ԿԳՄՍՆ. (n.d.). Հրաման N 380-Ն՝ Հավելված. *Միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.5 «Ոստիկանական սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչ.*

ոստիկանության լիազորությունները և թրաֆիքինգի կանխարգելումը: Այս երկու մոդուլների հարաբերական ժամանակը 88 ժամ է, ինչը վկայում է, որ կրթակարգում ընտանեկան բռնությունն ու դրա կանխարգելումը մեծ կարևորություն են վայելում[64]:

Ոստիկանական կրթակարգում բովանդակության համակարգումը կատարվում է ոչ միայն ՊԿՉ-ների միջոցով, այլ նաև առարկայական ծրագրերով, որոնք հստակեցնում են յուրաքանչյուր մոդուլի բովանդակությունը: *«Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը»* առարկայական նկարագրում նշվում են ոստիկանության ծառայակիցների պարտականություններն ու գործառույթները: Նկարագրում ընդգրկված են նաև անչափահասների հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել միջավայր, որտեղ սպաները կարող են քննարկել և սովորել, թե ինչպես աշխատել անչափահաս աղջիկների և կանանց հետ: Այս առարկաներում անդրադարձ է կատարվում նաև գենդերային հավասարության խնդիրներին և սոցիալական իրավիճակին՝ որպես ընտանեկան բռնության պատճառ: Կատարվում են նաև քննարկումներ բռնությունը գործադրողի հետ աշխատանքի վերաբերյալ:

«Կրիմինոլոգիա», «Համայնքային ոստիկանություն», «Մասնավոր իրավունք» և «Քրեական իրավունք» առարկաները նույնպես մանրամասն անդրադառնում են բռնության կանխարգելման և ենթարկվածների պաշտպանության գործում ոստիկանության պատասխանատվությանը: Օրինակ, *«Համայնքային ոստիկանություն»* առարկայում նշվում են ոստիկանի պարտականությունները համայնքում առկա խնդիրների վերհանման և դրանց արձագանքի մշակման համար: Դասընթացում շեշտվում է նաև համայնքային վստահության կառուցումը, ինչը կարող է ապահովել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեպքերի ավելի մեծ թվով գրանցում: *«Քրեական իրավունք 2»* առարկան ևս անդրադառնում է թրաֆիքինգի և շահագործման

---

[64] ՀՀ ԿԳՄՍՆ. (n.d.). Հրաման N 380-Ն՝ Հավելված. *Միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.5 «Ոստիկանական սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչ.*

դեպքերին՝ հնարավորություն տալով սովորողին ուսումնասիրել օրինակներ և ձևավորել իրենց կարծիքը տուժողների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ:

Իրավահավասարություն

«ՀՀ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում» նշվում է, որ կրթությունն է միակ գործիքը, որը կարող է նպաստել աղքատության, սոցիալական բևեռացման, այլ հասարակական խնդիրների մեղմացմանը և ժողովրդավարության զարգացմանը: Կրթությունը միտված է ոչ միայն ուսանողներին և մասնագետներին տալու համապատասխան «կոշտ» գիտելիքներ, այլ նաև «փափուկ» հմտություններ, որոնք կարևոր են հասարակության ոչ բևեռային և համաչափ զարգացման համար: Այդպիսի փափուկ հմտություններից է գենդերային անհավասարության դրսևորումների նշանառումը և կանխարգելումը, հատկապես ոստիկանական մարմիններում, որտեղ դեռևս տիրում են համայնքային հասարակական նորմեր: Ուստի, առաջնային է ուսումնասիրել, թե ինչպես է ուսումնական ծրագիրը փորձում կոտրել նորմային կարծրատիպերը, այս դեպքում՝ գենդերային անհավասարության վերաբերյալ:

Իրավահավասարության առկայությունը ՆԳՆ Կրթահամալիրի կրթական և առարկայական ծրագրերում կարևոր է, քանի որ այն սահմանում է գենդերային հավասարությունը և, խախտումների դեպքում, պատժի մեխանիզմը, որը կարող է նպաստել կանանց և աղջիկների դեմ բռնության կանխարգելմանը, ապահովել բարվոք միջավայր բռնության դեպքում բողոք ներկայացնելու համար և պաշտպանել նրանց հոգեբանական ճնշումից կամ բռնությունից: Ոստիկանության ուսումնական նյութերում, ինչպես բռնության կանխարգելման դեպքում, իրավահավասարությունը ներկայացվում է ՆԳՆ Կրթահամալիրի և անհատական առարկայական ծրագրերի միջոցով:

ՆԳՆ Կրթահամալիրի կրթակարգի 30 մոդուլներից յոթը վերաբերում են իրավունքի տարբեր ոլորտներին՝ ներառյալ քրեական իրավունք,

սահմանադրական իրավունք, և այլն: Այս յոթ իրավական կրթության մոդուլներից հինգը մանրամասնորեն ներկայացնում են իրավահավասարության կարևորությունը: Մոդուլ 5-ը՝ *«Պետություն և իրավունք»,* ներկայացնում է դասախոսությունների շարք *«Իրավունքի էությունը»* թեմայով, որտեղ քննարկվում են իրավունքների տեսությունները, դրանց կիրառումը հասարակական հարաբերությունների մեջ և դրանց կարգավորման գործում: Մոդուլ 6-ը՝ *«ՀՀ Սահմանադրական իրավունք»*, ներկայացնում է յուրաքանչյուր անձի իրավունքներն ու ազատությունները՝ մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակը և գենդերների հավասարությունը: Մոդուլ 10-ի՝ *«Քրեական իրավունք»,* շրջանակում կրթահամալրի ուսանողները ուսումնասիրում են հանցագործության կառավարման մանրամասները, ինչպես նաև տուժողներին պաշտպանելու ոստիկանության լիազորությունները: Մոդուլը ներկայացնում է այն հանցանքները, որոնք ուղղված են կյանքի, առողջության, ազատության, արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության դեմ: Այս մոդուլը նաև ընդգրկում է սեռական անձեռնմխելիության և ազատության պահպանման սկզբունքները:

Մոդուլ 26-ը՝ *«Մարդու իրավունքներ և ոստիկանություն»*, ներկայացնում է Մարդու իրավունքների հռչակագիրը՝ ուսուցման կենտրոնում պահելով ընտանեկան բռնության և խտրականության բացառման կարգավորումներին: Այն ընդգրկում է խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման ուղղությամբ ոստիկանության պատասխանատվությունը: Այս մոդուլում քննարկվում է նաև ընտանիքի, ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի անձեռնմխելիությունը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը: Մոդուլ 11-ը՝ *«Քրեական դատավարություն»*, ներկայացնում է քննչական գործողությունների գաղտնիության տեսակները, ներառյալ իրավական և օպերատիվ գաղտնիությունը, որն ապահովում է անձնական տվյալների պաշտպանությունը քննչական գործընթացում: Այս մոդուլների միջոցով ՆԳՆ Կրթահամալիրը ոչ միայն տալիս է իրավական գիտելիքներ, այլև կարևորում է իրավահավասարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը

ոստիկանական գործունեության ընթացքում, ինչը կարևոր է գենդերային հավասարության և բռնության կանխարգելման գործընթացներում:

Բարեվարքություն և բարոյականություն

Ըստ միջին մասնագիտական կրթության 1032.01.5 *«Ոստիկանական գործ»* մասնագիտության 1032.01.01.5 *«Ոստիկանության սպա»* որակավորման պահանջների, ի հավելում ոստիկանության սպա մասնագիտության մասնագիտական հմտություններին, ինչպիսիք են ոստիկանական ենթամշակույթի վերաբերյալ գիտելիքների տիրապետումը[65], միջանձնային փոխհարաբերությունների, վարվելակերպի և հաղորդակցման հմտությունները[66], ինչպես նաև մասնագիտական սահմանված գործառույթներին համապատասխան հմտությունները[67], ցանկացած ոստիկան պարտավոր է տիրապետել քաղաքացիների հետ շփման կանոններին՝ հետևելով էթիկայի և բարեվարքության նորմերին[68]: Նույն ՊԿՉ-ում կարևորվում է անձի և հասարակության զարգացման օրինաչափություններին, հասարակության սոցիալական կառուցվածքին և քաղաքականության սուբյեկտներին ծանոթ լինելը, ինչը անհրաժեշտ է ապագա ոստիկանին՝ հասարակության մեջ մարդու և հասարակական հարաբերությունների բարդությունները հասկանալու համար[69]:

Սոցիալական գիտելիքներն անհրաժեշտ են, որպեսզի յուրաքանչյուր ոստիկան կարողանա պատկերացնել բռնության ենթարկվածի հոգեվիճակը և ապրումները հարցաքննության և բռնության բացահայտման ընթացքում: Մոդուլ 1-ը վերաբերում է հաղորդակցության և միջանձնային հմտությունների զարգացմանը: Մոդուլի համար առանձնացված է 54 ժամ, սակայն մարդկային փոխհարաբերություններն ու օրինաչափությունները քննարկվում են մի շարք այլ մոդուլներում: Էթիկայի պարտադիր կանոն է համարվում նաև ոստիկանական

---

[65] ՀՀ ԿԳՄՍՆ. (n.d.). Հրաման N 380-Ն՝ Հավելված. *Միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.5 «Ոստիկանական սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչ.*
[66] Ibid., կետ 13
[67] Ibid., կետ 5
[68] Ibid.,կետ 9
[69] Ibid., գլուխ 4, կետ 11.5

գաղտնիքի ապահովումը, որը կարգավորվում է քրեական դատավարությամբ: Յուրաքանչյուր ոստիկան պարտավոր է պահպանել գաղտնիությունը և չհրապարակել որևէ անձնական տվյալ կամ պատմություն, որը կապված է քննչական գործընթացում ներգրավված մարդկանց հետ: Գաղտնիության խախտումը օրենքով պատժելի հանցագործություն է, հատկապես տուժողի շահերից ելնելով: *«16. Գաղտնիության ռեժիմ և գաղտնի գործավարություն»* մոդուլը ծանոթացնում է գաղտնիության իրավական հիմքերին և դրանց նշանակությանը, ներկայացնում ոստիկանների և հանրային առողջապահության հետ աշխատող աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և գաղտնիության խախտման հետևանքները: Մոդուլ 28-ը՝ *«Հակակոռուպցիոն քաղաքական հիմունքներ»,* ներկայացնում է կաշառք տալու և ստանալու ռիսկերը: Այս մոդուլն ընդգծում է այն հանգամանքը, որ շատ հաճախ ոստիկանական ծառայողները գաղտնիության իրենց լիազորությունները խախտում են շահադիտական նպատակներով:

Սակայն միայն մարդկանց հետ հաղորդակցության հմտությունների ուսուցումը բավարար չէ հանցագործության բոլոր կողմերի հոգեբանությունը հասկանալու և նրանց համապատասխան իրավական բառամթերքով դիմելու համար: Ուստի ՆԳՆ Կրթահամալիրի Մոդուլ 20. *«Մասնագիտական հոգեբանություն և մանկավարժություն»* բաժինը մանրամասնում է սոցիալ-հոգեբանական երևույթները, որոնք կարող են հանդիպել քննչական տարբեր իրավիճակներում: Այս մոդուլով կարգավորվում է նաև ծառայողական շփումների վերաբերյալ հմտությունների զարգացումը: Մոդուլ 21. *«Էթիկա և բարեվարքություն»* մոդուլը, որին հատկացված է 50 ժամ, նպատակ ունի ուսանողներին զինել բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման քայլերով, ապահովել ոստիկանական համակարգում խտրականության բացառումը և բոլորի նկատմամբ պատշաճ վերաբերմունքը, անկողմնակալությունը, ինչպես նաև պատվի, արժանապատվության և անկողմնակալության ապահովումը ոստիկանության բոլոր գործողություններում: *«Ոստիկանական ծառայության էթիկա»* առարկան ներկայացնում է ոստիկանության ծառայողի գործունեության բարոյագիտական արժեքները,

չափորոշիչները և սկզբունքները՝ հիմնված ազգային ավանդույթների և սովորույթների վրա: Այս առարկայական նկարագրում դասընթացները հիմնված են դեպքերի ուսումնասիրության վրա՝ քննարկումների և հարցուպատասխանի միջոցով:

Վարքագծի հարցը շոշափվում է նաև այլ մոդուլներում, ինչպիսիք են՝ *«Մարդկանց թրաֆիքինգը (շահագործումը) և դրա կանխարգելումը»*, որտեղ ներկայացվում է ոստիկանների դերը թրաֆիքինգի կանխարգելման և մարդկային փոխհարաբերությունների մեջ, *«Համայնքային ոստիկանություն»,* որտեղ մանրամասն ներկայացվում է ոստիկանության և հասարակության միջև վստահության կարևորությունը, և *«Պետական իրավունքի տեսություն»,* որտեղ ընդգծվում է էթիկայի պահպանման կարևորությունը իրավահավասարության և իրավունքների պաշտպանության գործում:

Շարունակական կրթություն

Ֆորմալ կրթությունից զատ, կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության բոլոր ձևերի ենթարկվածների կամ բռնարարների հետ աշխատող մասնագետների կրթությունը շարունակվում է նաև ոչ ֆորմալ ձևաչափերով: Դրանք ներառում են պետական ատեստավորումներ և վերապատրաստումներ, միջազգային և քաղաքացիական հասարակության նախաձեռնած դասընթացներ և սեմինարներ, ինչպես նաև հաճախ ինքնակրթություն, որը իրականացվում է ոստիկանական ծառայողների նախաձեռնությամբ: Ի տարբերություն նախորդ երեք ենթաբաժինների, շարունակական կրթության մեջ, ոստիկանական ծառայողներից բացի, դիտարկվում են նաև հանրային առողջության ոլորտի մասնագետները՝ բժիշկները և քննչական բաժիններում աշխատող առողջապահության մասնագետները:

Համաձայն *«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»* ՀՀ օրենքի, բոլոր բուժաշխատողների համար գործում է շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) պարտադիր պահանջ, ըստ որի՝ յուրաքանչյուր բուժաշխատող հինգամյակը մեկ պարտավոր է անցնել

պարտադիր ատեստավորում՝ ԾՄՁ կրեդիտներ հավաքելու և հավաստագիր ստանալու համար: Ավագ բուժաշխատողը պետք է հավաքի առնվազն 220 կրեդիտ, իսկ միջին բուժաշխատողը՝ 140, որպեսզի կարողանա շարունակել իր աշխատանքը[70]: Համաձայն *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին ուղղված ՀՀ Առողջապահության նախարարության (ԱՆ) պատասխան հրամանի (տե՛ս Հավելված 8), *«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»*-ն է պատասխանատու բուժաշխատողների վերապատրաստումների իրականացման համար, սակայն **գենդերազգայունության թեմայով ինստիտուտը վերապատրաստումներ չի իրականացրել**: Այնուամենայնիվ, որոշ դասընթացներ, որոնցից կարելի է ենթադրել գենդերազգայնության և բռնության ենթարկվածների հետ շփման վերաբերյալ ուսուցման առկայությունը, իրականացվել են վերջին տարիներին: Դրանք ներառում են կանանց առողջության պահպանման, բժշկական հոգեբանության և իրավունքի վերաբերյալ թեմաներ (տե՛ս Հավելված 4):

Ինչ վերաբերում է ոստիկանական ծառայողների վերապատրաստումներին, ապա համաձայն Միջին մասնագիտական կրթության 1032.01.*5 «Ոստիկանական գործ»* մասնագիտության և «Ոստիկանական սպա» որակավորման, յուրաքանչյուր ոստիկան պարտավոր է պարբերաբար ատեստավորվել՝ ապահովելով շարունակական կրթություն: Այս ատեստավորումների կարգը որոշվում է կամ կադրային աշխատանքների համար պատասխանատու ոստիկանության ստորաբաժանումը, կամ տվյալ ծառայողը՝ ելնելով աշխատանքի ընդունման ժամանակահատվածից: Եթե ռցյալ ծառայողը աշխատանքի մեջ է ավելի քան վեց ամիս, ապա նա պարտավոր է հաջորդող երեք տարիների ընթացքում անցել վերապատրաստում, ապա ատեստացիա: Իսկ եթե տվյալ ծառայողը նորեկ չէ և արդեն անցել է ատեստավորում, նա կարող է վերաատեստավորման դիմել նախորդ ատեստավորումից միայն երկու տարին

լրանալուց հետո[71]: Իսկ արդեն ուսումնական հաստատությունների ցանկը, վերապատրաստումների թեմաները, ընդունելի մասնակիցների թիմը և ժամկետները որոշվում են ըստ վերապատրաստման տարեկան և եռամսյակային պլանների՝ հաստատված ոստիկանության պետի կամ տեղակալի կողմից[72]: Ոստիկանության թիվ 25/1-530 *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին ուղղված պատասխան նամակի համաձայն, ՆԳՆ Կրթահամալիրում **ոստիկանության ծառայողների կամ ուսանողների համար հատուկ «գենդերազգայունություն» թեմայով դասընթացներ չեն իրականացվել:** Փոխարենը, անցկացվել են մի շարք դասընթացներ, որոնք ներառել են **խտրականության արգելքի և իրավահավասարության թեմաներ (2024):**

2024 թվականին ոստիկանության վերապատրաստումների շրջանակներում իրականացվել են չորս երկժամյա դասընթացներ (տե՛ս Հավելված 4): Այս վերապատրաստումներին մասնակցել են ընդհանուր 93 ոստիկանական ծառայողներ, ովքեր անցել են ատեստավորումը: Ըստ *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»* ՀՀ Կառավարության որոշման նախագծի (2024), 2021 թվականին իրականացվել են գենդերային հավասարության վերաբերյալ վերապատրաստումներ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողների համար, սակայն դրանց վերաբերյալ տեղեկատվությունը չի նշվել ՆԳՆ թիվ 25/1-530 պատասխան նամակում:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, գենդերային թեմաները նվազ ընդգրկվածություն

---

[71] ՀՀ Կառավարություն. (2023). Հրաման N 892-Ն. *ՀՀ կառավարության որոշումը ոստիկանության ծառայողների ատեստավորման կարգը սահմանելու և հհ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի n 2147-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.* Վերցված է՝ http://arlis.am/DocumentView.aspx?docid=178696

[72] ՀՀ Կառավարություն. (2003). Հրաման N 174-Ն. *ՀՀ կառավարության որոշումը ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին.* Գլուխ 2, հոդված 17. Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=10663.

ունեն ծրագրերում, իսկ վերապատրաստման ողջ գործընթացը քիչ է կենտրոնանում գենդերազգայուն մեթոդաբանության վրա, ինչը սահմանափակում է ուսուցիչների պատրաստվածությունը՝ դասարաններում խտրականությունը կանխելու և գենդերային հավասարությունը խթանելու հարցում:

Իրավական կարգավորումներում առկա չեզոքությունը, որը սկզբնական փուլում կարող է թվալ որպես խտրականության բացառման նշան, հաճախ բարդություններ է առաջացնում գենդերային հավասարության ամրապնդման և կիրառման հարցում: Խոսույթի և վարքագծի մակարդակում գենդերային հավասարությունը հաճախ ներկայացվում է որպես հարգանքի և ժողովրդավարության դրսևորում, սակայն օրենքի շրջանակներում այն մնում է վերացական և ենթադրելի՝ առանց կոնկրետ իրավական մեխանիզմների, որոնք կկարողանան կյանքի կոչել այս սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգը ներկայումս ընդգրկում է մի շարք ծրագրեր և կարգավորումներ, որոնք ուղղված են ուսուցիչների վերապատրաստմանը և իրավահավասարության հարցերի բարձրացմանը: ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում նախատեսված է 9-ժամյա բաժին՝ *«Հանրակրթության բնագավառի օրենսդրության»* ուսուցում, որտեղ ընդգրկված են գենդերային հավասարության հարցերը[73]:

Վերջին երեք տարիների ընթացքում *Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի* (այսուհետ՝ ԿԶՆԱԿ) կողմից վերապատրաստվել են ավելի քան 37,000 ուսուցիչներ և մանկավարժներ, սակայն վերապատրաստման թեմաները հիմնականում շրջանցել են գենդերային հավասարության և խտրականության բացառման հարցերը: Սա ցույց է տալիս, որ

[73] Ըստ «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» (N 02/09.1/16672-2024) հրամանի, վերապատրաստման ծրագիրը ներառում է 9-ժամյա բաժին՝ «Հանրակրթության բնագավառի օրենսդրության» ուսուցում: Միայն այս բաժնում, «արտալսարանային ժամեր/ինքնուրույն» աշխատելու թեմաների ցանկում է նաև «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրները» թեման, որը այս ուսումնասիրության կենտրոնական խնդիրն էր:

կրթական համակարգում գենդերային հավասարությանը տրամադրված ուշադրությունը չի համապատասխանում միջազգային և ներազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններին:

Ուսումնական կրթական ծրագրերում, 2023 թվականին հաստատված «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասագրքերում, շարունակվում է առկա լինել գենդերային խտրականություն, որը նպաստում է կարծրատիպերի ձևավորմանը և հետագայում հանգեցնում է կանանց և աղջիկների նկատմամբ խտրական վերաբերմունքի: Չնայած այս հետազոտության ընթացքում ԿԳՄՄՆ ուղարկված հարցման պատասխանի (տե՛ս Հավելված 5), որտեղ հստակ նշվում էր. *«2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ հաստատված Հանրակրթության պետական նոր չափորոշչով տպագրվող դասագրքերում և դասավանդվող առարկաներում բացառվելու են գենդերային տարրեր մատնանշող բոլոր պարամետրերը»,* իրականությունը մի փոքր այլ է: Դասագրքերը դեռևս լի են նմանատիպ *«գենդերային տարրեր մատնանշող պարագաներով»:* Այս դեպքում բազում հարցեր են առաջանում. եթե պատմական բոլոր կերպարներում միայն տղամարդիկ են ներկայացված, ապա ո՞րն է կնոջ դերը հասարակության մեջ: Ինչպե՞ս են կանայք նպաստել/նպաստելու երկրում տնտեսության զարգացամը և որո՞նք են այն իրավահավասար փոխհարաբերությունները կանանց և տղամարդկանց միջև, երբ ապագայի տեսլականն այսքան սահմանափակ է աղջիկների համար՝ նույնիսկ տարրական և միջին դասարանի դասգրքերում:

Ուսումնասիրված օրենքներում նշված մարդկային կապիտալը, իրավահավասարությունը, կանանց և տղամարդկանց դերերի կարևորությունն ու առկա կամ բացակա հավասարությունը դառնում են անիրագործելի, երբ չկան օրինակներ, որոնք կոգեշնչեն աղջիկներին դառնալ «հերոսներ» և ցույց կտան տղաներին, որ աշխարհն ու հասարակությունը տղամարդակենտրոն չեն: Ստացվում է, որ իրավական այն պնդումները, թե կանանց և տղամարդկանց իրավունքները հավասար են և որ կանայք նույնպես երկրում տնտեսական զարգացման կարևոր մարդկային ռեսուրս են, դասագրքերում ներկայացվող «քարոզը» այլ պատկեր է ստեղծում, որտեղ ապագան միայն տղամարդիկ են

կերտում: Դասագրքերում ուղղակի կամ անուղղակի խտրականության առկայությունը հանգեցնում է սովորողների և կրթողների մեջ կողմնակալ արժեհամակարգի ձևավորմանը և ամրապնդում է կարծրատիպերը, որոնք հետագայում դառնում են կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հիմք կամ, լավագույն դեպքում, դրա արդարացում՝ հատկապես երբ դասագրքերում կին գրողների ու հրապարակախոսների քանակը և դերը սահմանափակ են:

Չնայած գենդերային հավասարության պահանջներին, շատ կրթական հաստատություններում այդ թեման պատշաճ չի ընդգրկվում կանոնակարգերում՝ ո՛չ պաշտպանության, ո՛չ կանխարգելման, և ո՛չ էլ իրազեկման տեսանկյունից: Որոշ համալսարաններում, ինչպիսիք են ԵՊՀ-ն և ԵՊԲՀ-ն, գործում են ներքին կանոնակարգեր, որոնք նախատեսում են սեռական և ֆիզիկական բռնությունների կանխարգելում և պատշաճ վարքագծի խրախուսում: Սակայն այս կանոնակարգերը հաճախ ներկայացվում են որպես ընդհանուր վարքագծի կանոններ և չեն տրամադրում հստակ մեխանիզմներ, որոնք կկարգավորեն գենդերային հավասարության հարցերը: Սուբյեկտիվ հասկացությունները անհամեմատ շատ են օրենքներում, իրավական ակտերում և ուսումնական փաստաթղթերում, ինչպես օրինակ՝ ԲՊՀ-ի կանոնադրությունում նշված «բարոյական որակներ» զարգացնելու պարտականությունը, որին պետք է հետևի դասավանդողը, սակայն որն անորոշ է թողնում, թե ժամանակի փոփոխությունների պայմաններում ինչ են նշանակում այդ բարոյական նորմերը՝ համեստությո՞ւնը, թե՞ անհավասարության մասին բարձրաձայնումը:

Գենդերազգայունությունը որոշակի կարևորություն ունի մանկավարժների վերապատրաստման ծրագրերում, սակայն հիմնականում չի նշվում որպես կոնկրետ նպատակ: Բացի այդ, կրթական հաստատություններում հաճախ բացակայում են համապատասխան կանոնակարգեր և մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն գենդերային հավասարությունը և դասախոսական կազմի աշխատավարձերի հավասար քաղաքականությունը: Սա նպաստում է կարծրատիպերի պահպանմանը և խոչընդոտում կանանց ավելի մեծ ներգրավվածությանը որոշումների կայացման գործընթացներում:

Ուսումնասիրված մյուս համալսարաններում նման կանոնադրություններում գենդերային հավասարության պակասից զատ, չեն նշվում հստակ մեխանիզմներ, որոնք կօգնեն պաշտպանել կին աշխատակիցներին սեռական ոտնձգություններից կամ ոչ հավասար աշխատավարձային քաղաքականություններից: Ոչ մի համալսարանական կանոնադրություն չունի աշխատավարձերի կարգավորման մեխանիզմներ, որոնք կկարգավորեն դասախոսական կազմի աշխատավարձերի քաղաքականությունը: Նույն կերպ բացակայում են նաև աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման կանոնակարգեր կամ ուղեցույցներ, որոնք կպաշտպանեն դասախոսներին, այդ թվում նաև գենդերային խտրականությունից: Այն համալսարաններում, որտեղ կան գենդերազգայուն դառնալուն ուղղված մեխանիզմներ, դեռ առկա է «ապակե առաստաղներ», որոնք խոչընդոտում են կանանց և աղջիկների ներգրավվածությանը: Համալսարանական խորհուրդներում կին դասախոսների ներգրավման ջանքերը բացակայում են, իսկ որոշումները հիմնականում կայացնում են տղամարդիկ, նույնիսկ այն համալսարաններում, որտեղ ուսանողուհիները գերակշռում են: Կանանց ներկայացվածությունն այս ուղղությամբ բացակայում է:

Գենդերազգայունությունը և հավասարությունը կարևոր տեղ են զբաղեցնում նաև մանկավարժների կրթության մեջ՝ կրթական ծրագրերի և վերջնարդյունքների միջոցով՝ արտահայտված տարբեր ներկայացուցչական արժեքների տեսքով, սակայն երբեք որպես «գենդերային հավասարություն»: Դժվար է ասել, արդյոք գենդերային հավասարության «քարոզը» պահպանվում է բուն դասապրոցեսի ընթացքում՝ և՛ ուսուցիչ-աշակերտ, և՛ դասախոս-ուսանող փոխհարաբերություններում, քանի որ այս ուսումնասիրությունը հետաքննական նպատակ չուներ և չի ուսումնասիրում օրենքներից և կրթական ծրագրերից դուրս իրականությունը: Դասախոս-ուսանող և ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների ու *«թաքնված ուսումնական ծրագրի»* ուսումնասիրությունից է կախված ստեղծված ռեսուրսների, դասագրքերի և մնացած կանոնադրությունների արդյունավետությունը: Այս բոլոր խնդիրները հանգեցնում են նրան, որ գենդերային հավասարության գաղափարներն ու

մեթոդաբանությունը դեռևս բավարար չափով չեն ներդրվել կրթական և հասարակական այլ ոլորտներում, ինչը դժվարացնում է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելումն ու պատշաճ արձագանքը: Օրենքները և կրթական համակարգը պետք է շարունակաբար վերանայվեն՝ ապահովելու համար հավասարության ավելի լայն տարածում և խտրականության բացառման գործուն մեխանիզմներ:

Երբ դիտարկում ենք ոստիկանության և առողջապահության ոլորտում գենդերազգայուն վերապատրաստումների հարցը, ապա ներգրավված անձանց քանակի և առկա թեմատիկ վերապատրաստումների ցուցակի հիման վրա կարելի է եզրակացնել, որ գենդերային կրթության հնարավորությունները սահմանափակ են: Մասնավորապես, ՆԳՆ Կրթահամալիրի կրթակարգում ներառված են որոշ դասընթացներ, որոնք կարող են նպաստել մասնագետների՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելման ունակությունների զարգացմանը: Սակայն առողջապահական ոլորտում նման վերապատրաստումները լիովին բացակայում են: Գենդերազգայնության և հավասարության թիրախային դասընթացների բացակայությունը կարող է խոչընդոտել բուժաշխատողների՝ բռնության ենթարկված կանանց հանդեպ հարգալից և արժանապատիվ վերաբերմունքի ձևավորմանը: Ճնայած պետական չափորոշիչների պահանջին, ամենօրյա բռնության դեպքերը ցույց են տալիս, որ առաջին օղակի մասնագետների աշխատանքը հաճախ չի համապատասխանում սպասելիքների մակարդակին:

Հատկանշական է, որ բոլոր երեք ենթաթեմաների ու ուսումնասիրման առարկաների դեպքում էլ բացակայում էր «գենդեր» հասկացության ուղղակի օգտագործումը: Այն փոխարինված էր տարբեր այլ հասկացություններով՝ օրինակ, «համամարդկային արժեքների զարգացում», «դաստիարակություն», «վարքագծի ձևավորում», «ներառականություն» և այլն: Նմանատիպ հասկացությունները հիմնականում սուբյեկտիվ են, քանի որ հիմնվում են ընթերցողի արժեհամակարգի վրա: Արդյո՞ք ընթերցողը գենդերային հավասարությունը կամ խտրականության բացակայությունը համարում է համամարդկային արժեք, կամ արդյո՞ք կանանց հզորացումը բոլոր ընթերցողների

ընկալման մեջ կրում է նույն դրական նշանակությունը: Ուստի, հավասարության նման անուղղակի հասկացությունների գործածումը օրենքը դարձնում է խոցելի՝ թուլացնելով իրավահավասարության և գենդերային դերերի ընկալման հարցը ցանկացած ընթերցողի մոտ:

Սահմանափակումներ

Հետազոտության հիմնական սահմանափակումներից մեկն այն է, որ կիրառված մեթոդաբանությունը չի ներառում էթնոգրաֆիկ մոտեցում, որը հնարավորություն կտար ավելի խորը ուսումնասիրել կրթական միջավայրում գենդերային անհավասարության դրսևորումները: Չնայած այս մեթոդը կարևոր է կրթական բովանդակությունը հասկանալու համար, այն սահմանափակ է գործնական իրականությունը բացահայտելու տեսանկյունից: Բովանդակային վերլուծությունը չի կարող լիարժեք պատկերացում տալ այն մասին, թե ինչպես են այդ օրենքներն ու ծրագրերը կիրառվում ուսուցիչների կողմից դասարանում կամ լսարանում, ինչպիսին են ուսուցիչների և աշակերտների միջև գործնական հարաբերությունները, կամ ինչպես են կրթական միջավայրի սոցիալական, մշակութային և հոգեբանական գործոնները ազդում նրանց վրա: Օրինակ, հնարավոր է օրենքով պարտադրել գենդերային հավասարություն դպրոցներում, բայց եթե ուսուցիչները չեն ստեղծում հավասարության միջավայր կամ չեն խրախուսում սոցիալական արդարության գաղափարները, ապա այն չի վերածվի գործնական փոփոխության: Այստեղ մեթոդաբանական բազմազանությունը, օրինակ՝ էթնոգրաֆիկ ուսումնասիրությունները, կարող էին արտացոլել ուսուցիչների վարքագիծը և սովորողների հետ հարաբերությունները:

Բացի այդ, բովանդակային վերլուծության մեթոդաբանությունը չի արտացոլում ուսուցիչների կամ դասախոսների անձնական մոտեցումները և համոզմունքները, որոնք կարող են մեծ դեր ունենալ գենդերային հարցերի ընկալման և կիրառման մեջ: Ուսուցիչների գործնական փորձը, վարքագիծը և կրթական միջավայրի սոցիալական կառուցվածքները կարող են էական ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե ինչպես են կրթական ծրագրերն ու

քաղաքականությունները գործում, ինչը բովանդակային վերլուծությամբ դժվար է լիարժեք բացահայտել: Եթե դասարաններում ուսուցիչները չեն խթանում հավասարության միջավայրը կամ չեն ձգտում վերացնել մշակութային սահմանափակումները, ապա օրենքներն ու կարգավորումները չեն կարող արդյունավետ լինել: Ուսուցիչների ու աշակերտների միջև հարաբերությունները, սոցիալական նորմերը և հաղորդակցման ձևերը չպետք է սահմանափակվեն միայն ֆորմալ ուսումնական նյութերի և կարգավորումների վերլուծությամբ:

Եվս մեկ կարևոր սահմանափակում է Հայաստանում իրավական բառապաշարի «լղոզվածությունը»: Հետազոտության արդյունքները հաճախ կախված են ուսումնառության սուբյեկտների՝ օրենքի վերաբերյալ ունեցած ենթադրություններից և մեկնաբանություններից: Օրինակ, արդյո՞ք ներառականությունը ընդգրկում է գենդերային հավասարությունը, ի՞նչ չափով է իրավահավասարությունը վերաբերում գենդերային հարաբերություններին, թե արդյոք այն ավելի ընդհանրական է՝ ընդգրկելով այլ տեսակի իրավահավասարության խնդիրներ: Նմանատիպ հարցերը հաճախ ծագում են, երբ ուսումնասիրվում են հետազոտության նյութերը, որտեղ ակնհայտ է բանալի բառերի և եզրույթների օգտագործման անորոշությունը: Այս սահմանափակումների ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին աջակցել գենդերային հավասարության և գենդերազգայունության եզրույթների ներառմանը ՀՀ Սահմանադրության և այլ կարևոր իրավական փաստաթղթերում: Երկրորդ, անհրաժեշտ է հաշվարկել ընթերցողների կողմից իրավական տեքստի հնարավոր բոլոր մեկնաբանությունները:

Մեկ այլ սահմանափակում կապված է առարկայական և դասագրքային վերլուծությունների սահմանափակության հետ: Հետազոտությունը հիմնականում կենտրոնանում է մի քանի առարկաների՝ «Մայրենիի», «Հայոց լեզվի» և «Գրականության» վրա: Չնայած այս առարկաները զգալի ազդեցություն ունեն կրթական համակարգի ձևավորման վրա, գենդերային հավասարության խնդիրը առկա է նաև այլ առարկաներում, ինչպիսիք են մաթեմատիկան, բնագիտությունը, տեխնոլոգիան և հասարակագիտությունը: Գենդերային դրսևորումները հատկապես այս առարկաներում կարող են արտացոլել այն, թե

ինչպես են տարբեր սեռերի աշակերտներին ներկայացվում ապագայի մասնագիտությունները և հասարակական դերերը: Օրինակ, մաթեմատիկայի և բնագիտության դասագրքերում հաճախ քիչ են ներկայացվում կանանց ձեռքբերումները գիտության ոլորտում, ինչը կարող է նվազեցնել աղջիկների մոտ հետաքրքրությունը դեպի գիտական ոլորտներ: Տեխնիկական և բնագիտական առարկաները մեծ դեր ունեն աշխատանքի շուկայում, և դրանց շրջանակներում գենդերային հավասարության բացակայությունը կարող է ստեղծել խոչընդոտներ, որոնք կպահպանեն մասնագիտությունների գենդերային տարանջատումը:

Վերջաբան

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ, չնայած կրթական համակարգում գենդերային հավասարության ապահովման ջանքերին, Հայաստանի կրթական ոլորտում առկա են խորը և համակարգային խնդիրներ: Այս խնդիրները դրսևորվում են կրթության տարբեր մակարդակներում՝ սկսած տարրական դպրոցներից մինչև համալսարաններ և շարունակական կրթության ծրագրեր, ինչպես օրինակ ոստիկանական և բուժաշխատողների վերապատրաստումները: Կրթական համակարգի հիմնական խնդիրներից մեկը իրավական և քաղաքական փոփոխությունների ու դրանց գործնական կիրառման միջև առկա բացն է: Թեև մի շարք օրենքներ և կարգավորումներ հստակ սահմանում են գենդերային հավասարության սկզբունքները, այդ նորմերը հաճախ չեն արտացոլվում կրթական բովանդակության և գործընթացների մեջ:

Արդյունքում, դպրոցներում և համալսարաններում դասագրքերն ու ուսումնական ծրագրերը դեռևս արտացոլում են գենդերային անհավասարություն: Դասագրքերում կանանց և տղամարդկանց դերերը հաճախ ներկայացված են կարծրատիպերով՝ կինը հիմնականում հանդես է գալիս տնային աշխատանքների շրջանակում, իսկ տղամարդը՝ հանրային դերակատարի, մասնագիտական ոլորտներում: Այսպիսի դասագրքերը կարող են

սահմանափակել թե՛ աղջիկների, թե՛ տղաների հնարավորությունները՝ նպաստելով գենդերային կարծրատիպերի պահպանմանը:

Որոշ համալսարաններ, ինչպիսիք են ԵՊՀ-ն, ԲՊՀ-ն և «Հայբուսակ» համալսարանը, ներառում են որոշ կանոնակարգեր, որոնք ուղղված են գենդերային հավասարության ամրապնդմանը: Սակայն նույնիսկ այդ կանոնակարգերում հաճախ բացակայում են հստակ մեխանիզմներ, որոնք կնպաստեն կանանց ներգրավմանը որոշումների կայացման գործընթացներում: Նույնիսկ այն հաստատություններում, որտեղ ուսանողների մեծ մասը կանայք են, որոշումները հիմնականում կայացնում են տղամարդիկ՝ ստեղծելով անորոշություն և ուղղորդման պակաս գենդերային հավասարության իրականացման համար:

Շարունակական կրթության ծրագրերում, ինչպիսիք են բժիշկների և ոստիկանների վերապատրաստումները, նույնպես չի ընդգրկվում գենդերազգայունության անհրաժեշտությունը: Բժշկական ոլորտի աշխատակիցների վերապատրաստումները հիմնականում չեն ներառում գենդերային հավասարության և բռնության ենթարկվածների հետ զգայուն շփման ձևերը: Այս պակասը հանգեցնում է նրան, որ առողջապահական ոլորտում մասնագետները բավարար հմտություններ չունեն կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեպքերին պատշաճ արձագանքելու համար:

Հետևաբար, գենդերային հավասարության հասնելու գործընթացը պահանջում է խորքային փոփոխություններ, որոնք պետք է տարածվեն ոչ միայն օրենքների և ֆորմալ կարգավորումների վրա, այլ նաև կրթական միջավայրի մակարդակում:

Առաջարկություններ

Հետևյալ առաջարկությունների ցանկը թիրախավորված է այս ուսումնասիրության մեկ կամ մի քանի շահագրգիռ կողմերի համար, ուստի, յուրաքանչյուր առաջարկություն հստակեցնում է նաև հասցեատիրոջը:

- **Առաջարկություն 1. ՀՀ ԿԳՄՍՆ-ին**

Այս ուսումնասիրությունը բացահայտեց այն բոլոր մարտահրավերները, որ ԿԳՄՍՆ-ն ունի հանրակրթական դպրոցների պետական դասագրքերի մշակման, ընտրության և հաստատման աշխատանքներում: Ուստի, առաջարկվում է հետևյալ դասագրքերի գենդերազգայնության բարձրացման համակարգը և խրախուսվում դրա ինստիտուցիոնալացումը.

Քայլ 1. Դասագրքերի՝ ներառյալ փոքրամասնությունների, ընտրության ընթացակարգի թափանցիկության և մասնակցելիության ապահովում, որպեսզի շահագրքիռ կողմերը ևս կարողանան առաջարկներով հանդես գալ:

Քայլ 2. Դասագրքերի վերջնական ընտրության չափորոշիչների ուսումնասիրություն և փորձաքննություն:

Քայլ 3. Դասագրքերի ընտրության հանձնաժողովում կամ դասագրքերի հեղինակների հետ աշխատող անձնակազմում մանկավարժահոգեբանական թիմի ներառում:

Քայլ 4. Ընտրված երեք լավագույն հեղինակների գենդերազգայնության թեմայով վերապատրաստում, հետվերապատրաստում համապատասխան խնդիրների մատնանշում և ակնկալիքների հստակեցում:

Քայլ 5. Արտաքին փորձագետների կողմից վերջնական ընտրված դասագրքերի գենդերային փորձաքննության կազմակերպում և իրազեկում:

Քայլ 6. Առաջացած գենդերային զգայնության վերաբերյալ խնդիրների հանդեպ հետևողականություն, լուծման քայլերի և ժամկետների հստակեցում:

- **Առաջարկություն 2. ԿԳՄՍՆ-ին**

ԿԳՄՍՆ հարակից կրթական կառույցներին խրախուսել գենդերային զգայնության թեմաներով վերապատրաստումների, դասընթացների և աշխատարանների կազմակերպումը: Ներկայումս նման նախագծերը գրեթե բացակայում են կամ իրականացվում են փոքր/ծրագրային մաշտաբներով, ուստի փոփոխությունն աննշան է: Նախքան վերապատրաստումների կազմակերպումը և՛ վերապատրաստողների, և՛ վերապատրաստվողների համար հստակեցնել, թե որոնք են այն բոլոր թույլատրելի և ոչ թույլատրելի արտահայտությունները/վերաբերմունքը, որոնք կարող են տանել գենդերային

հարաբերությունների դրական/բացասական փոփոխության: Հստակեցնել գենդերային հարաբերությունների միջառարկայությունը:

- **Առաջարկություն 3. ԿԳՄՄՆ-ին**

Բարձրացնել դասագրքերում կին հեղինակների ներկայացվածությունը, եթե ոչ մեկ դասագրքի կամ ժամանակահատվածի համար, ապա գոնե հաշվի նստել հեղինակների հարաբերակցության մեջ ընդհանուր կրթական ծրագրի համեմատականով՝ առաջինից մինչև տասներկուերորդ դասարաններում:

- **Առաջարկություն 4. ԿԳՄՄՆ-ին**

Խրախուսել ՀՀ կրթական բոլոր հաստատություններին իրականացնել մեծ իրազեկման արշավներ, որպեսզի ուսանողների մեծամասնությունը տեղյակ լինեն տվյալ համալսարանի/կրթական հաստատության հստակ կանոնադրության, այլ կանոնակարգերի և որոշումների առկայության վերաբերյալ: Սա իրենից կարող է ներկայացնել համալսարաններում Ուսանողական խորհուրդների և Ուսանողական գիտական միավորումների միջոցով ուսանողների ներքին կանոնակարգերի, իրավունքների պաշտպանության, իրացման, տեղեկացվածության բարձրացմանը: Հավելյալ աշխատանք է անհրաժեշտ տանել դասախոսական կազմի հետ՝ ներկայացնելով ոչ միայն գենդերազգայնության կարևորությունն իրենց առարկաներում և դասավանդման մեջ, այլ նաև գենդերազգայնությունն իրենց իսկ աշխատանքային իրավունքներում: Այս աշխատանքը կարող է նաև վստահվել քաղաքացիական հասարակության մի շարք անդամների և ներկայացուցիչների, ովքեր կկարողանան իրականցնել վերապատրաստումներ, կարողությունների զարգացման աշխատարրաներ, ինչպես նաև քննարկումներ արդեն ավելի զգայուն թեմաներով, ինչպիսիք են սեռական բռնությունն ու խտրականության դրսևորումները համալսարանների տարբեր շերտերում:

- **Առաջարկություն 5. ԱՆ-ին**

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առողջապահական համակարգի գրեթե ոչ մի շերտում և աստիճանում չի իրականացվում գենդերազգայնության որևէ վերապատրաստում բժշկական անձնակազմի հետ: Ուստի, կարևոր է, որպեսզի հատկապես այն առողջապահական անձնակազմը, որն ունի ամենօրյա շփում

բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև բռնարարների հետ, ունենա տվյալ անձանց հետ շփման համապատասխան հմտություններն ու հասկացողությունը: Ուստի, խրախուսվում է իրականացնել բազմահոգեբանական դասընթացներ գենդերային հավասարության, ընտանեկան և սեռական բռնության և այլ հարակից թեմաներով, որպեսզի յուրաքանչյուր բուժանձնակազմի անդամ ունենա բավարար հմտություն և լինի գենդերազգայուն:

- **Առաջարկություն 6. ՔՀԿ-ներին**

Ելնելով այս ուսումնասիրությունից, ՀՀ-ում իրավիճակից, ինչպես նաև ուսումնասիրության շրջանակում կազմակերպված քննարկման արդյունքներից, հույժ կարևոր է գենդերազգայնության օրակարգայնացումը: Անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության միջոցով մի շարք գենդերային հավասարությանը վերաբերող խնդիրներ բերել Հանրային խորհուրդների քննարկման հարթակ: Նույն հարթակներում հետագայում կարելի է նաև կազմակերպել արդեն օրենքներում և իրավական ակտերում լղոզված գենդերային բառապաշարի բարելավմանն ուղղված ջատագովության աշխատանքներ:

- **Առաջարկություն 7. ՆԳՆ-ին և ՆԳՆ Կրթահամալիրին**

Քանի որ ՆԳՆ կրթակարգն արդեն դաշտային փուլում արդյունավետությունը հաստատող որևէ հետազոտություն չկա, առաջարկություններից մեկը ՆԳՆ Կրթահամալիրի դասախոսական կազմի գենդերազգայնության թեմաներով պարբերաբար վերապատրաստումն է, որպեսզի յուրաքանչյուր դասախոս կարողանա տիրապետել և հաջողության փոխանցել այն բոլոր գենդերազգայուն թեմաները, որոնք առաջ են քաշվում արդեն բուն Կրթակարգում: Անհրաժեշտություն կա նաև իրականացնելու ավելի խորը գենդերազգայնության դասընթացներ արդեն ակտիվ ոստիկանական ծառայողների հետ, որպեսզի իրենց հմտությունների բարելավումը հնարավորություն տա վերականգնելու համայնքներում ոստիկանության աշխատողների հանդեպ ոտնատակյա վստահությունը:

- **Առաջարկություն 8. ՆԳՆ-ին և ԿԳՄՍՆ-ին**

Այս ուսումնասիրության վերջին և ամենակարևոր առաջարկությունը դա այս հետազոտության վալիդացումն է արդեն հաջորդող հետազոտությունների

միջոցով: Տվյալ հետազոտությունն ուսումնասիրում էր օրենքների, իրավական ակտերի և այլ չափելի նյութերի թեմատիկ և բովանդակային արդյունքը, սակայն միայն սա բավարար չէ որևէ ոլորտի աշխատանքի վերաբերյալ վերջնական գնահատական տալու համար: Այս ուսումնասիրությանը պարտադիր պետք է հաջորդի արդեն տարրական, միջնակարգ, ավագ, բարձրագույն կրթական հաստատություններում, ինչպես նաև ՆԳՆ Կրթահամլիրում ավելի դաշտային, էթնոգրաֆիկ հետազոտությունը: Այդ հետազոտություններն արդեն կարող են ուսումնասիրել, թե տեքստերից, օրենքներից և գրականությունից դուրս ինչպես են կազմակերպվում դասաժամերը կրթության յուրաքանչյուր աստիճանում, ինչպիսի բառամթերք, խտրականության և հավասարության օրինակներ, մարտահրավերներ և ուժեղ կողմեր ունեն այս ոլորտները: Առանց էթնոգրաֆիկ հետազոտության, դասաժամը ուսումնական ցանկացած համակարգում կշարունակի մնալ ինչպես «սև խոռոչը»՝ անբացահայտ և անվերլուծելի: Մինչդեռ էթնոգրաֆիկ հետազոտությունը հնարավորություն կտա չափել այս ուսումնասիրության թիրախային նյութերի ազդեցությունը, դրանց հաջողմանը խանգարող մարտահրավերները և նույնիսկ քարտեզագրել հավանական լուծումներ: Նմանատիպ հետազոտությունից հետո արդեն յուրաքանչյուր կրթական հաստատություն կարող է իրականացնել շարունակական մոնիթորինգ և կառավարել մատուցվող գիտելիքի և հմտության որակը:

Գրականության ցանկ

1. ԲՊՀ. (2024). ՊՊՀ ամբիոնի օրինակելի կանոնադրություն: Վերցված է՝ https://brusov.am/website/documentation/files/2d43f7ac.pdf
2. Համալսարանական խորհուրդ. (2022). «Հայբուսակ» համալսարանի էթիկայի կանոնագիրք: Վերցված է՝ https://haybusak.am/wp-content/uploads/2023/07/R01-YHU-Code_of_Ethics-EN.pdf
3. Գալստյան, Ա., & Թովմասյան, Թ. (2023). *Մայրենի 5.* Էդիտ Պրինտ հրատարակչություն: Վերցված է՝ https://lib.armedu.am/article/15291
4. Giroux, H. A. (1978). Developing educational programs: Overcoming the hidden curriculum. *The Clearing House, 52*(4), 148–151. http://www.jstor.org/stable/30185121
5. Guest, G., MacQueen, K. M., & Namey, E. E. (2012). *Applied thematic analysis*. SAGE Publications.
6. ԵՊՀ. (2023). ԵՊՀ կանոնադրություն: Վերցված է՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2023/02/University_Charter-2023_02_13.pdf
7. ԵՊՀ. (2021). ԵՊՀ Բարեվարքության կանոնակարգ: Վերցված է՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2021/12/Ethics-code.pdf
8. Economist Intelligence Unit (EIU). (2023). *Democracy Index 2023: Age of conflict.* Retrieved from https://pages.eiu.com/rs/753-RIQ-438/images/Democracy-Index-2023-Final-report.pdf?version=0&mkt_tok=NzUzLVJJUS00MzgAAAGVcBs16jJlK3xXKDNyECz60d4tiNqNgZGgmysK_JrarIse2EnxtYg7OxYymLplSu93EakB_h_OwpJ1L5FYvVYJ9nve-CCHiP9UmZs6fOM-Mo-N1g
9. European Institute for Gender Equality (EIGE). (n.d.). *Gender neutral vocabulary.* Retrieved from https://eige.europa.eu/publications-resources/thesaurus/terms/1321?language_content_entity=en
10. Council of Europe. (2011). *Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence (CETS No. 210).* Retrieved from https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=210
11. ԵՊԲՀ. (2021). ՊԲՀ Կանոնադրություն: Վերցված է՝ https://ysmu.am/v2/wp-content/uploads/2023/04/9e4a25d0.pdf
12. Խաչատրյան, Ն., Գրիգորյան, Ն., & Սերոբյան, Ա. (2016). Աջակցությո՞ւն, թե՞ կանխում. ՀՀ բարձրագույն կրթական համակարգում կանանց ակադեմիական կարիերայի կառուցման սոցիալ-մշակութային գործոնները:

ԵՊՀ Հրատարակչություն, 107–129. Վերցված է՝ http://publishing.ysu.am/files/Gender-2016.pdf
13. Ծատուրյան, Ռ. (2013). Գենդերային խնդիրները մանկավարժական (դասախոսների, ուսուցիչների և ապագա մանկավարժ ուսանողների) միջավայրում: *Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան:*
14. Committee on the Elimination of Discrimination Against Women. (1993). *General recommendation No. 19: Violence against women*. United Nations. Retrieved from https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=3&DocTypeID=11
15. ՀՀ Ազգային ժողով. (2013). *«Կանանց և տղամարդկանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենք.* Retrieved from https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=83841
16. United Nations General Assembly. (2015). *Transforming our world: The 2030 Agenda for Sustainable Development.* Retrieved from https://sustainabledevelopment.un.org/content/documents/21252030%20Agenda%20for%20Sustainable%20Development%20web.pdf
17. Council of Europe. (2018). *Council of Europe Convention on Preventing and Combating Violence Against Women and Domestic Violence (CETS No. 210).* Retrieved from https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=treaty-detail&treatynum=210
18. Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ). (2021–2023). *Ուսուցիչների վերապատրաստումների ցուցակ.* ՀՀ ԿԳՄՍՆ.
19. Krippendorf, K. (2004). *Content analysis: An introduction to its methodology.* Sage Publications.
20. European Union & Republic of Armenia. (2017). *Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA).* Retrieved from https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ENG_1.pdf
21. ՀՕ-297. (1999). *«ՀՀ Կրթության մասին» օրենք.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155043
22. ՀՕ-57-Ն. (2023). *ՀՀ Օրենքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին*. Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841
23. ՀՕ-62. (2005). *«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենք.* Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820
24. ՀՕ-164-Ն. (2005). *«Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին» օրենք.* Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=68301

25. ՀՕ-160-Ն. (2009). *«Հանրակրթության մասին» օրենք.* Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908
26. ՀՀ ԿԳՄՍՆ. (2022). *Հրաման N 20. Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և պետական չափորոշչին համապատասխանության գնահատման հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164226
27. ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). *Հրաման N 80-Ն. Հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-րդ և 6-րդ դասարանների «Մայրենի», 8-րդ և 11-րդ դասարանների «Հայոց լեզու», 8-րդ դասարանի «Գրականություն», 11-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկաների ծրագրերը հաստատելու մասին.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=179947
28. ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). *Հրաման N 12-Ն. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 65-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175582
29. ՀՕ-441-Ն. (2022). *«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին.* Վերցված է՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043
30. ՀՀ Կառավարություն. (2024). *«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների խրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ.* Վերցված է՝ https://www.e-draft.am/projects/6821/about
31. ՀՀ ԿԳՄՍՆ. (2023). *Հրաման N 44-Ն. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին.*
32. ՀՊՄՀ. (2022). *ՀՊՄՀ կանոնադրություն.* Վերցված է՝ https://aspu.am/website/images/files/HPMH%20UG_kanonadrutyun.pdf
33. ՀՀ ԿԳՄՍՆ. (n.d.). *Հրաման N 1162-Ա/2. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչ և օրինակելի ծրագիր.*
34. ՀՀ ԿԳՄՍՆ. (n.d.). *Հրաման N 380-Ն՝ Հավելված. Միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ուստիկանական գործ» մասնագիտության 1032.01.5 «Ուստիկանական սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչ.*
35. ՀՀ Կառավարություն. (2003). *Հրաման N 174-Ն. ՀՀ կառավարության որոշումը ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում)*

անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին. Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=10663
36. ՀՀ Կառավարություն. (2021). *Հրաման N 136-Ն. Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788
37. ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ». (2022–2024). *ԾՄՀ Կրեդիտավորված միջոցառումների ցանկ և հակիրճ նկարագրեր.* Վերցված է՝ https://nih.am/am/publications
38. ՀՕ-42. (1996). *«ՀՀ օրենքը բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին».* Վերցված է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=104958
39. Մեյթիխանյան, Փ. (2023). *Հայոց լեզու 7.* «Աստղիկ գրատուն» հրատարակչություն. Վերցված է՝ https://online.fliphtml5.com/fumf/zehx/#p=2
40. Naeem, M., Ozuem, W., Howell, K., & Ranfagni, S. (2023). A step-by-step process of thematic analysis to develop a conceptual model in qualitative research. *International Journal of Qualitative Methods, 22.* https://doi.org/10.1177/16094069231205789
41. Neuendorf, K. A. (2019). *Content analysis and thematic analysis*. In P. Brough (Ed.), *Advanced research methods for applied psychology* (pp. 211–223). Routledge.
42. Նիկողոսյան, Ա., & Վարդանյան,. (2023). *Գրականություն 7.* «Անտարես» հրատարակչություն. Վերցված է՝ https://online.fliphtml5.com/fumf/ocva/#p=2
43. ՆԳՆ. (2024). *ՆԳՆ Կրթահամալիրի կրթական ծրագիր և առարկայական ուսումնական ծրագրեր.*
44. ՆԳՆ. (2024). *ՆԳՆ Կրթահամալիրի առարկայական նկարագրեր.*
45. ՀՀ Կառավարություն. (2004). *Որոշում N20. Հանրակրթության պետական կրթակարգի մասին օրենք.* Վերցված է՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=25829
46. ՀՀ Կառավարություն. (n.d.). *Որոշում N2300-Լ, ՀՀ Կառավարության 2023 թվականի Նոյեմբերի 18-ի N-1902-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.* Վերցված է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068
47. Pervaiz, Z., Akram, S., Ahmad Jan, S., & Chaudhary, A. R. (2023). Is gender equality conducive to economic growth of developing countries? *Cogent Social Sciences, 9*(2). https://doi.org/10.1080/23311886.2023.2243713
48. Jnanathapaswi, S. G. (2020). Learning for pacifism: An anthology of the why, what & how of peace education. *International Journal of Exclusive Global Research*, 5(3).

49. Jnanathapaswi, S. (2021). *Thematic analysis & coding: An overview of the qualitative paradigm.*
50. Silova, I. (2016). *Gender analysis of Armenian school curriculum and textbooks.* The World Bank.
51. Սարգսյան, Ա. Վ., Ջիլավյան, Ե., & այլոք. (2023). *Մայրենի 2.* «Քվանտ Վարժարան» հրատարակչություն. Վերցված է՝ https://lib.armedu.am/article/15288
52. UN General Assembly. (1948). *Resolution 217: Universal Declaration of Human Rights (UDHR).* United Nations. https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights
53. UN General Assembly. (2015). *The 2030 Agenda for Sustainable Development.* United Nations. https://sdgs.un.org/goals#history
54. United Nations. (1995). *Beijing Declaration and Platform for Action: Fourth World Conference on Women*. United Nations. Retrieved from https://www.un.org/en/events/pastevents/pdfs/Beijing_Declaration_and_Platform_for_Action.pdf
55. Unterhalter, E. (2012). Mutable meanings: Gender equality in education and international rights frameworks. *The Equal Rights Review, 8.* Retrieved from https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/ERR8_Elaine_Unterhalter.pdf
56. Ուիլս, Է., Գասպարյան, Ա., & Մաթոսյան, Ա. (2018). *Ոստիկանության արձագանքը Հայաստանում կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը: Գործնական ձեռնարկ Հայաստանի ոստիկանության համար.* Եվրոպայի խորհուրդ. Վերցված է՝ https://rm.coe.int/coe-police-response-to-vaw-and-dv-in-armenia-handbook-arm-14-12-2018-2/pdf/1680af8171

Հավելվածներ

Հավելված 1. Ուսումնասիրված օրենքներն՝ ըստ ենթաթեմաների

Ուսումնասիրության ենթաբաժին	Օգտագործված օրենքներ և հարակից իրավական ակտեր, դասագրքեր
Հայաստանի դպրոցներում ոչ խտրական բովանդակության և դասավանդման պրակտիկայի կանոնակարգման պահանջները	• ՀՕ-297՝ ՀՀ Կրթության մասին օրենք • ՀՕ-160՝ Հանրակրթության մասին օրենք • ՀՕ-164՝ Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին օրենք • ՀՕ-62՝ Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենք • N136–Ն՝ Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ • Հրաման N 20՝ Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին • Որոշում N20՝ Հանրակրթության պետական կրթակարգի մասին օրենք • Հրաման N44՝ Հանրակրթության պետական չափորոշիչներ • Հրաման N80՝ Հանրակրթության պետական չափորոշիչներ • Հրաման N65՝ Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ և

	5-րդ դասարանների «Մայրենի», 7-րդ և 10-րդ դասարանների «Հայոց լեզու», 7-րդ դասարանի «Գրականություն», 10-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկաների ծրագրերը հաստատելու մասին • Որոշում N351-Լ՝ ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին • ՀՕ-441-Ն՝ ՀՀ Օրենքը «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին • «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների խորագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության նախագիծ • Սարգսյան, Վ. Ա., Թորոսյան, Կ., Գրիգորյան, Ս., և Խաչատրյան, Հ. (2010) «Մայրենի 2. առաջին և երկրորդ մաս». Մանսար հրատարակչություն • Բարսեղյան, Հ., Մեյթիխանյան, Փ., (2016). «Հայոց լեզու». Աստղիկ հրատարակչություն • Նիկողոսյան, Ա., Վարդանյան, Ա. (2023). «Հայ գրականություն 7». Անտարես հրատարակչություն • Հրաման N12-Ն՝ Հանրակրթական ուսումնական հաստատությունների «Մայրենի» 5-րդ դասարանի լրամշակված ծրագիր

Գենդերային զգայունության արտացոլումը հայաստանյան բուհերում՝ մանկավարժների մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններում	• ՀՕ-297՝ ՀՀ Կրթության մասին օրենք • ՀՕ-62՝ Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենք • ՀՕ-164՝ Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին օրենք • N 136-Ն՝ Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ • ՀՕ-160՝ Հանրակրթության մասին օրենք • Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) կանոնադրություն • ԵՊՀ Բարեվարքության կանոնակարգ • ԵՊՀ Էթիկայի կանոնակարգ • Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) կանոնադրություն • Բժշկական պետական համալսարանի (ԲՊՀ) կանոնադրություն • «Հայբուսակ» համալսարանի կանոնակարգեր • ՊԲՀ կանոնադրություն • ՀՊՄՀ ուսուցիչների/մանկավարժների համար նախատեսված ուսումնական ծրագիր/եր ուսուցիչների բոլոր մասնագիտությունների համար՝ թվով 16 մասնագիտական ծրագիր • Որոշում N351-Լ՝ ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին • ՀՕ-441-Ն՝ ՀՀ Օրենքը ««ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման

	պետական ծրագիրը» հաստատելու մասին • «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների խրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության նախագիծ • ԿԳՄՍՆ ուսուցչական և վարչական կազմի վերապատրաստման ծրագիր • ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ԿՁՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող ուսուցչական կազմի վերապատրաստումների տարեկան ծրագիր
Կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ գործընթացում առնչվող մասնագետների աշխատանքային վերապատրաստման նյութերը և դրանց հիմքում ընկած նորմատիվ իրավական կարգավորումները	• «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների խրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության նախագիծ • Որոշում N136-Ն՝ Հայաստանի պետական չափորոշիչի հաստատման կարգ • Որոշում N2300-Լ՝ 2021-2026 թթ. Գործունեության միջոցառումների ծրագրի Աշխատանքի և սոցիալական հարցերի և Ներքին գործերի նախարարության Միջոցառումների ցանկ • ՀՕ-441՝ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի» օրենք • Հրաման N-174՝ ՀՀ կառավարության որոշումը ոստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները

	հաստատելու մասին (ինչպես նաև հարակից փոփոխություններ) ևՈստիկանության ծառայողի վերապատրաստում (որակավորում) անցնելու կարգը և պայմանները՝ ըստ հրաման N174-ի • ՀՀ ՆԳՆ Կրթահամալրի Վերապատրաստման և ատեստավորման 2023-2024 թվականի ցանկ և մասնակիցների թիվ • ՀՀ ՆԳՆ Կրթահամալրի Կրթական ծրագիր և առարկայական ուսումնական ծրագրեր • ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ԾՄՁ Կրեդիտավորված միջոցառումների ցանկ և հակիրճ նկարագրեր • ՀՕ-42՝ «ՀՀ Օրենքը բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» • ՀՀ Կառավարություն, Հրաման N 380-Ն՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի N 1740-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու և միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.01.5 «ոստիկանության սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին

Հավելված 2. Ուսումնասիրության կոդերն ու թեմաները

Ուսումնասիրության վերնագիր	**Աղբյուր**	**Կառուցված կոդեր**[74]	**Թեմա**
Հայաստանի դպրոցներում ոչ խստրական բովանդակության և դասավանդման պրակտիկայի կանոնակարգման պահանջները	Օրենքներ և իրավական ակտեր	Անհատ	➢ Վարվելակերպ և ինքնարտահայտում
		Հոգեբանություն	
		Համոզմունքներ	➢ Ներառականություն
		Ներառականություն	
		Խտրականություն	
		Հանդուրժողականություն	
		Արժեք, արժեքիամակարգ	➢ Համամարդկային արժեհամակարգային կրթություն ➢ Իրավահավասարություն
		Ընտանիք	
		Համամարդկայնություն	
		Առանձնահատկություններ	
		Փոխ-հարաբերություններ	➢ Գենդերային հարաբերությունների ներկայացումն օրենքներում

[74] Բոլոր բանալի բառերն օգտագործվել են իրենք հոլովներով և այլ հանդիպող ձևերով, օրինակ. «հանդուրժողականություն» բանալի բառի ներքո նաև դիտարկվել է «հանդուրժող» տարբերակը:

		կին	➢ Գենդերային դերեր
		տղամարդ	
	Դասագրքեր	Ընտանեկան և առօրեական իրավիճակային պատկերներ	➢ Գենդերային դերեր ➢ Գենդերային բնութագրիչներ ➢ Ոգեշնչում և օրինակելիություն
		Կին	
		Տղամարդ	
		Կնոջ/տղամարդու, աղջկա/տղայի պատկերներ	
Գենդերային գգայունության արտացոլում մը հայաստանյան բուհերում՝ մանկավարժների մասնագիտության բակալավրիատի և	Օրենքներ և իրավական ակտեր	Իրավահավասարություն	➢ Իրավահավասարություն/հավասարություն
		Հավասարություն	
		Գենդերային հավասարություն	
		Վարքագիծ	➢ Բարեվարքություն համալսարանների, կրթական հաստատությունների և ընդհանրապես կրթության շահակիրների միջև
		Դաստիարակություն	
		Հարգանք	
		Բարեվարքություն	
		Համարդկայնություն	➢ Համամարդկային արժեքներ (օրենքներում և կրթական կանոնակարգերում
		Ներառականություն	
		Բարոյականություն	
		Արդարացիություն	

		Թրաֆիքինգ	➢ Բռնության դրսևորումների նշմարում և կանխարգելմանն ուղղված բովանդակություն
		Խոշտանգումներ	
Կանանց (աղջիկների) նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ողջ գործընթացում առնչվող մասնագետների աշխատանքային վերապատրաստման նյութերը և դրանց հիմքում	Օրենքներ և իրավական ակտեր	Բռնություն Պաշտպանություն	
		Կանխարգելում	
		Իրավունք/ներ	➢ Իրավահավասարության ընկալմանն ու գործածմանն ուղղված բովանդակություն
		Ազատություններ	
		Հավասարություն-իրավահավասարություն	
		Միջանձնային հարաբերություններ	➢ Բարեվարքության և բարոյական վերաբերմունքի համակարգայնացմանն ուղղված բովանդակություն
		Բարեվարքություն	
		Էթիկա Բարոյականություն/ բարոյական	
		Լիազորություններ	
		Վերապատրաստում	➢ Համընդհանուր վերապատրաստման և շարունակական կրթության բովանդակություն:
		Մասնագիտական աճ	

Հավելված 3. ՀՊՄՀ-ի կրթական ծրագրի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական բաժնում գենդերազգայնության ձգտող կետեր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՐԱԿԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ
ԲԿԾ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ա3. Ներկայացնում է անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ-մշակութային, տնտեսական, քաղաքական, աշխարհագրական) գործոնները: Ա*6.* նկարագրել մարդու իրավունքներն ու պարտականությունները*,* մարդու և հասարակության*,* մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվեցողության կանոնները և իրավական նորմերը բնագավառներից*:* Գ*5.* Կրել պատասխանատվություն ազգային և համամարդկային արժեքների պահպանման և ներկայացման համար*:*
ԲԿԾ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	Ա*3.* Վերլուծել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքները *(*այդ թվում ներառական*),* սովորողների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները*,* հիմնավորել կենսաբանական գիտելիքների դերը սովորողի առողջ և անվտանգ ապրելակերպի*,* էկոլոգիական մշակույթի ձևավորման*,* ազգային և համամարդկային արժեքների դաստիարակման գործում*,*

	պարզաբանել կյանքի կազմավորման մակարդակները, օրգանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների աշխարհագրական տարածման առանձահատկությունները, տնտեսական նշանակությունն ու պահպանության հիմնախնդիրները: Ա5. Պարզաբանել ՀՀ կրթության քաղաքականությունը, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ և ծրագրեր), հանրակրթական դպրոցում մանկավարժական և աշակերտական կոլեկտիվի հետ աշխատելու էթիկական նորմերը:
ԲԿԾ ՔԻՄԻԱ	Ա2 Մեկնաբանել քիմիայի և բնագիտության մյուս ճյուղերի հիմնական տեսական դրույթները և դրանց ընդհանրական կապը, քիմիական և մանկավարժական տեսությունների զարգացման պատմությունը, կրթության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, ուսուցման կազմակերպման ձևերը (այդ թվում նաև ներառական), կրթության որակի չափորոշիչները: Ա4 Ներկայացնել քիմիական խնդիրների լուծման տեսական և փորձարարական ուղիները՝ ուսումնական և հետազոտական նպատակով խնդիրներ առաջադրելիս, մարդու իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվեցողության կանոնները և իրավական նորմերը:
ԲԿԾ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ	Ա2. Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա

	հոգեբանամանկավարժական, տարիքային - անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ - մշակութային, տնտեսական) գործոնները: Գ3. Կրել պատասխանատվություն սեփական անձի առողջության, ազգային և համամարդկային արժեքների պահպանման և ներկայացման համար:
ՄԿԾ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ	Ա1. Ներկայացնել կրթության առաքելությունն ու փիլիսոփայությունը, կրթության սոցիալ-մանկավարժական խնդիրները, համագործակցային և ստեղծագործական կրթական միջավայրի դերը՝ կանխատեսելով կրթության զարգացման ուղղությունները և առաջացած խնդիրների լուծման հնարավորությունները, ինչպես նաև քննարկել ինֆորմատիկայի և նրան առնչվող գիտակարգերի առաջանցիկ ձեռքբերումները, մարտահրավերները, հարացույցերը, կրթության համակարգի զարգացման ազգային, համամարդկային համատեքստերում, ժամանակակից մանկավարժական և մասնագիտական գործունեության կազմակերպման իրավական հենքը: Ա2. Մեկնաբանել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-մշակութային զարգացումների համատեքստում աշակերտների և մեծահասակների տարիքային, հոգեբանամանկավարժական, սոցիալականացման օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները և նրանց հետ աշխատելու եթոդներն ու

	տեխնոլոգիաները:
ԲԿԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ	Ա5. մասնագիտական գործունեությունն իրացնելիս հաշվի առնի աշակերտների տարիքային, հոգեբանական և մտավոր զարգացման առանձնահատկությունները: Նպատակ՝ հմտություններ, հաղորդակցական կարողություններ, հոգեբանամանկավարժական հմտությունների ձևավորում՝ իրադրային, խմբային և միջանձնային ուղղորդման մոդելներով, ազգային և օտար իրողությունների, իրույթների և արժեհամակարգերի նպատակային զուգադրում՝ լեզվի, մշակույթի, հասարակական կյանքի և գիտության ոլորտներում:
ՄԿԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ	Ոչ մի իրավունքահենք կամ գենդերազգայուն կետ
ԲԿԾ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ	Ա2. Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ-մշակութային, տնտեսական) գործոնները: Բ2. Կիրառել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում:
ՄԿԾ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ	Ա2. Մեկնաբանել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-մշակութային

	զարգացումների համատեքստում, աշակերտների և մեծահասակների տարիքային, հոգեբանամանկավարժական, սոցիալականացման օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները և նրանց հետ աշխատելու մեթոդներն ու տեխնոլոգիաները:
ՄԿԾ ՔԻՄԻԱ	Ա1. Ցուցաբերել քիմիայի ոլորտում խորը մասնագիտական գիտելիքներ, մանկավարժության նորագույն ձեռքբերումների, մանկավարժական գործունեության կազմակերպման իրավական հենքի իմացության, կրթության համակարգի զարգացման ազգային, համամարդկային համատեքստերում՝ օգտագործելով դրանք ինչպես ուսուցման ընթացքում, հետազոտության մեջ, այնպես էլ աշխատանքում: Ա2. Մեկնաբանել քիմիայի ուսուցման մանկավարժական գործընթացը, քիմիայի ուսուցման դերն ու աշխարհայացքային նշանակությունը՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-մշակութային զարգացումների համատեքստում աշակերտների ու մեծահասակների տարիքային, հոգեբանամանկավարժական, սոցիալականացման օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները, նրանց հետ աշխատելու առանձնահատկությունները, մեթոդներն ու տեխնոլոգիաները և կրթության առաքելությունն ու փիլիսոփայությունը, կրթության սոցիալ-մանկավարժական խնդիրները, համագործակցային և ստեղծագործական կրթական միջավայրի դերը, կրթության զարգացման ուղղությունները և առաջացած խնդիրների լուծման

	հնարավորությունները;
ՄԿԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	Ա1. Քննարկել պատմագիտության, մանկավարժության և նրանց առնչվող գիտակարգերի առաջանցիկ ձեռքբերումները, մարտահրավերները, հարացույցերը, կրթության համակարգի զարգացման ազգային, համամարդկային համատեքստերում Ա2. Մեկնաբանել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-մշակութային զարգացումների համատեքստում աշակերտների և մեծահասակների տարիքային, հոգեբանամանկավարժական, սոցիալականացման և զարգացման օրինաչափությունները
ՄԿԾ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ա1. Քննարկել մանկավարժությանը և հասարակագիտությանն առնչվող գիտակարգերի առաջանցիկ ձեռքբերումները, մարտահրավերները, հարացույցերը կրթության համակարգի զարգացման ազգային, համամարդկային համատեքստերում, ժամանակակից մանկավարժական գործունեության կազմակերպման իրավական հենքը;
ՄԿԾ ՖԻԶԻԿԱ	Ա2. Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ-մշակութային, տնտեսական) գործոնները:
ՄԿԾ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	Ա2. Ներկայացնել կենսաբանական, կենսաճարտարագիտական և բնապահպանական տեխնոլոգիաները,

	կենսաբանական փորձաքննության և մոնիթորինգի էությունը, գնահատել ՀՀ կենսաբազմազանությունը, կենսառեսուրսները, դրանց օգտագործման և վերականգնման հեռանկարները, ՀՀ պահպանվող տարածքների բնապահպանական և էկոկրթական նշանակությունը: Մեկնաբանել հանրակրթության ռազմավարական համակարգը, դպրոցի կառավարման իրավական հիմունքները և մեխանիզմները, օրենսդրական ակտերը և փաստաթղթավարությունը: Ա3. Տիրապետել կենսաբանության ուսուցման համակարգված գիտելիքներին, սովորողների հետ աշխատելու առանձնահատկություններին, մեթոդներին և տեխնոլոգիաներին, այդ թվում՝ այլընտրանքային, ինտեգրված ուսուցման սկզբունքներին, սոցիալ-մանկավարժական խնդիրներին, հաղորդակցական և թիմային աշխատանքի առանձնահատկություններին, հետադարձ կապի մեխանիզմներին, գիտակցել համագործակցային և ստեղծագործական կրթական միջավայրի դերը:
ԲԿԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	Ա6.նկարագրել մարդու իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվեցողության կանոնները և իրավական նորմերը: Գ5. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը, համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում, կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին բուժօգնություն:

Հավելված 4. Ոստիկանության և առողջապահական համակարգի թեմատիկ վերապատրաստումներ 2023-2024

Վերապատրաստման թիրախային խումբ	**Վերապատրաստման դասընթացի թեմա**
Ոստիկանություն (ՀՀ ՆԳՆ Կրթահամալիր, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության սպայական կազմ)	• Մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները • Մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները • Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերը ոստիկանության գործունեության համատեքստում • Մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատությունները, դրանց իրականացման երաշխիքները և խտրականության արգելքի սկզբունքը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում • Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և երեխաների իրավունքների վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերը
Առողջապահական համակարգ (բուժաշխատողներ)	• 2024 թվականի օգոստոսի 15-ին կազմակերպված «Բժշկական իրավունք. իրավաբանական անվտանգությունը առողջապահության ոլորտում» դասընթացը, որը քննարկել է բժշկական գաղտնիքի պահպանման և խախտման

	պատասխանատվությունները (ԱԱԻ): • 2024 թվականի մայիսի 2-ին անցկացված «Կանանց առողջության պահպանումը միջմասնագիտական արդիականացված մոտեցմամբ» թեմայով գիտաժողովը, որը կենտրոնացել է կանանց առողջության վերաբերյալ հարցերի վրա: Չնայած սեռական բռնության ենթարկվածների քանակի քննարկում չի եղել, առկա է եղել հարց ու պատասխանի բաժին, որը հնարավորություն է տվել քննարկել բռնության ենթարկվածների հետ փոխհարաբերությունները (ԱԱԻ): • 2024 թվականի հուլիսի 8-ին կազմակերպված «Բժշկական հոգեբանություն և հոգեբանական միջամտության ձևերը բուժաշխատողների գործունեության մեջ» դասընթացը, որի ընթացքում քննարկվել են անձի հետ փոխհարաբերությունները, բուժաշխատողների հոգեբանական աջակցության տրամադրման ձևերը (ԱԱԻ):

Հավելված 5. ՀՀ ԿԳՄՄՆ պատասխան-հրամանն ուղղված *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N02/09.1/16672-2024

«ԸՆԴԴԵՄ ԿԱԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ»

ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՏԱԹԵՎԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ

(էլ. փոստի հասցեն՝ csvwarmenia@gmail.com)

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի

մայիսի 29-ի գրության

Հարգելի՛ Տաթևիկ Աղաբեկյան

Հայտնում եմ, որ 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ հաստատված Հանրակրթության պետական նոր չափորոշչով տպագրվող դասագրքերում և դասավանդվող առարկաներում բացառվելու են գենդերային տարբեր մատնանշող բոլոր պարամետրերը: Կարծրատիպերի հաղթահարման տեսանկյունից կարևորվում են հատկապես հանրակրթության ոլորտի բովանդակային բարեփոխումները, մասնավորապես՝ նոր չափորոշչի ներդրումը, որն անցել է առանձին փորձաքննություն՝ միջազգային փորձագետների աջակցությամբ, որպեսզի ապահովվի գենդերային զգայունության առկայությունը բովանդակային փաստաթղթերում և առարկայական ծրագրերում:

Հայտնում եմ նաև, որ 2020 թվականի սեպտեմբերի 7-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» N 1162-Ա/2 հրամանը: Վերապատրաստման ծրագրում ներառված են նաև գենդերազգայուն և գենդերարձագանքող մեթոդաբանության և մոտեցումների վերաբերյալ թեմաներ, որոնց յուրացման արդյունքում դասավանդող ուսուցիչը ատեստավորվում է՝ գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով:

Recoverable Signature

X

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: SVAJYAN ARAKSIA 6304780168 **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատ.՝ Անի Խաչատրյան
Հանրակրթության վարչության
հանրակրթության և արտադպրոցական
կրթության քաղաքականության մշակման և

Հավելված 6՝ ՀՀ ՆԳՆ պատասխան-հրամանն ուղղված *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004 Երևան, Ծովակալ Իսակովի պող.29

Թիվ 25/1-530

Հեռ. /10/ 778-122

«30» 05 2024թ.

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»
ՀԿ նախագահ Տաթևիկ Աղաբեկյանին
(ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Էմին 119/2,
Հեռ.՝ 041 43 37 43, էլ.փոստ՝ csvwarmenia@gmail.com)

Հարգելի՛ տիկին Աղաբեկյան,

Ի պատասխան ՀՀ ներքին գործերի նախարարին 29.05.2024թ. Ձեր կողմից հասցեագրված հարցմանը՝ Ձեզ է ուղարկվում հարցման 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով հայցվող տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է հարցման 2-րդ կետին, ապա հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանության աշխատողների համար նախատեսված վերապատրաստման պարտադիր դասընթացների ցանկ որևէ իրավական ակտով սահմանված չէ: ՀՀ կառավարության 23.01.2003թ. N 174-Ն որոշման հավելվածի 10-րդ կետը սահմանում է, որ ոստիկանության ծառայողների յուրաքանչյուր կատեգորիայի համար ուսուցման կոնկրետ ժամկետները և բովանդակությունը որոշվում են ուսումնական պլաններով ու առարկայական ծրագրերով, որոնք մշակում են համապատասխան ուսումնական հաստատությունները՝ ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ: Բացի այդ, ներկայումս ոստիկանության համակարգում քննչական ստորաբաժանումներ չկան:

Առդիր՝ ,,44,, ֆայլ:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ ***Մ. Մուրադյան***

Կատարող՝ Մ.Մարկոսյան
Հեռ. 093-60-15-70

Հավելված 7՝ ՀՀ ՀՊՄՀ-ի պատասխան-հրամանն ուղղված *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»* ՀԿ նախագահին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORTS
KHACHATUR ABOVIAN ARMENIAN STATE
PEDAGOGICAL UNIVERSITY

Էլ փոստ՝ info@aspu.am
Վեբ կայք՝ www.aspu.am

Հեռ.Tel.: (+374 10) 59-70-49
Fax. (+374 10) 59-70-01

0010, Երևան, Տիգրան Մեծի 17
0010, Yerevan, Tigran Mets 17

N 22/08.1.6-799

«27» 06. 2024 թ.

ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Աղաբեկյան

Ի պատասխան 2024 թվականի մայիսի 29-ի թիվ 1/05-24 գրության՝ Ձեզ ենք տրամադրում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ձեր կողմից թվարկած կրթական ծրագրերի մասնագրերի էլեկտրոնային տարբերակը: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Ձեր կողմից նշված կրթական ծրագրերով դասավանդող դասախոսների համար չի իրականացվել գենդերային զգայունության թեմաներով պարտադիր դասընթացներ:

ՌԵԿՏՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Արշակյան Շ.
Հեռ: 010 597017

Հավելված 8՝ ՀՀ ԱՆ պատասխան-հրամանն ուղղված «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ նախագահին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

07.06.24 № ԱՍՊ/19/16516-24
Ձեր N _____

«ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՏԱԹԵՎԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ
(Էլ. հասցե՝ cswarmenia@gmail.com)

Հարգելի՛ տիկին Աղաբեկյան,

Առողջապահության նախարարությանն ուղղված սույն թվականի մայիսի 29-ի Ձեր հարցմանն ի պատասխան՝ հայտնում եմ հետևյալը.

1. Ձեր կողմից բարձրացված 1-ին հարցի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի հիման վրա ՀՀ-ում գործում է բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգը՝ ավագ և միջին բուժաշխատողների համար սահմանելով հավաստագրման պարտադիր պահանջ: Վերջինիս արդյունքում, շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) հավաստագիրը տրամադրվում է յուրաքանչյուր հնգամյա շրջափուլում օրենսդրությամբ սահմանված ՇՄԶ կրեդիտների նվազագույն քանակը կուտակելու և առնվազն 3 տարի մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում: Ընդ որում, ՇՄԶ կրեդիտներ կարելի է կուտակել ՀՀ-ում և/կամ արտերկրում մասնակցելով կրեդիտավորված միջոցառումների:

Միաժամանակ, օրենքով նախատեսվում է թեստավորում անցնելու հնարավորություն այն բուժաշխատողների համար, ովքեր վերջին հինգ տարում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն չեն իրականացրել կամ վերջին հինգ տարում կուտակել են ՇՄԶ կրեդիտների նվազագույն քանակի 70 տոկոսը: Թեստավորման առաջադրանքները կազմվել են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովների կողմից: Թեստավորմանը նախապատրաստվելու նպատակով հանձնաժողովների կողմից

Առողջապահության նախարարություն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ info@moh.am

ներկայացված յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան գրականության ցանկը հասանելի է ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում:

ՇՄՋ կրեդիտների քանակը և դրանց շնորհման կարգը սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանով (այսուհետ՝ Հրաման):

Յուրաքանչյուր շրջափուլում ավագ բուժաշխատողը պետք է կուտակի 220 ՇՄՋ կրեդիտ (որից առնվազն 200-ը՝ մասնագիտական թեմաներից), միջին բուժաշխատողը 140 ՇՄՋ կրեդիտ (որից առնվազն 125-ը՝ մասնագիտական թեմաներից): Ավագ բուժաշխատողը առավելագույնը 20, իսկ միջին բուժաշխատողը՝ 15 ՇՄՋ կրեդիտ, կարող է կուտակել բժշկական ոլորտի իր համար մասնագիտական չհամարվող (հարակից) թեմաներից:

2. 2-րդ հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի համար օրենսդրությամբ սահմանված չէ պարտադիր ՇՄՋ դասընթացների ցանկ: ՇՄՋ դասընթացներն իրականացվում են ըստ մասնագետների դիմելիության:

ՇՄՋ կրեդիտավորված միջոցառումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջում:

Ինչ վերաբերում է 3-րդ և 4-րդ հարցադրումներին՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում գենդերային զգայնության թեմայով դասընթացներ չեն իրականացվում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԻՆԵ ԱՎՈՅԱՆ

X

ԱՐՄԻՆԵ ԱՎՈՅԱՆ

Signed by: AVOYAN ARMINE 5109850453

Կատարող՝ Լիլիթ Հարությունյան
ՀՀ ԱՆ ԱԱԻ ՄԳՀԱԿ
Հեռ.՝ (+374) 10-234-731